


3249



Ի. Ասակիս

Կոնյակի պատճեն
Ազգային գրադարան
Տեղական բանակցութեան 36-ր
Տրուխիօտական ուժութեան
Տեղական բանակցութեան վեհանութեան
Իրավունքի պահպան
Տեղական բանակցութեան վեհանութեան
Մասնակիութեան պահպան

3 K 33
4-97



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք






20 NOV 2009

21 JUN 2005

W X Y Z up

4-97

ԷՍԱԼԻՆ



ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՏՐՈՑԿԻՄԱԿԱՆ
ՈՒ ԱՅԼ ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻՆԵՐԻՆ
ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ
ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՅԵՎՀՅԵՆՔԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ ՀԱՄԿ(Ք)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ
1987 թ. ՄԱՐՏԻ 8-5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 1937 ԵՐՐՎԱՆ

10 5 AUG 2013

3249

4735

39

И. СТАЛИН

О НЕДОСТАТКАХ ПАРТИЙНОЙ РАБОТЫ И МЕРАХ
ЛИКВИДАЦИИ ТРОЦКИСТСКИХ
И ИНЫХ ДВУРУШНИКОВ

Доклад и заключительное слово на пленуме ЦК ВКП(б)
3—5 марта 1937 г.

Армпартиздат, Ереван, 1937 г.

Հնկերնե՛ր :

Պլենումում լսված զեկուցումներից և դժանց շուրջը ծավալված մտքերի փոխանակությունից յերեսում ե, վոր մենք այս-տեղ գործ ունենք հետեւյալ յերեք հիմնական փաստերի հետ :

Առաջին՝ ոտարերկրյա պետությունների գործակալների վնասարարական և դիվերսիոն-լրտեսական աշխատանքը, վորոնց թվում բավականաչափ ակտիվ գեր եյին խաղում տրոցկիստները, այս կամ այն չափով չոշափել ե մեր բոլոր կամ համարյա բոլոր կազմակերպությունները, ինչպես տնտեսական, այնպես ել վարչական ու կուսակցական :

Յերկրորդ՝ ոտարերկրյա պետությունների գործակալները, այդ թվում տրոցկիստները, սողոսկել են վոչ միայն ստորին կազմակերպությունների, այլև վորոշ պատասխանատու պոստերի մեջ :

Յերրորդ՝ մեր մի քանի զեկալար ընկերներ, ինչպես կենուրոնում, այնպես ել տեղերում, վոչ միայն չկարողացան տեսնել այդ վնասարարների, դիվերսանտների, լրտեսների ու մարզասպանների իսկական գեմքը, այլև այն աստիճան անհոդ, բարեհոգի ու միամիտ դուրս յեկան, վոր հաճախ իրենք ոժանդակեցին ոտարերկրյա պետությունների գործակալների այս կամ այն պատասխանատու պոստերը գրափելուն :

Մրանք են այն յերեք անվիճելի փաստերը, վորոնք բնականաբար բղխում են զեկուցումներից և նրանց շուրջը ծավալված մտքերի փոխանակությունից :

I

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀՈԳՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞վ բացատրել, վոր մեր զեկավար ընկերները, վորոնք ամեն տեսակ հակակուսակցական ու հակախորհրդային հոսանքների դեմ մղվող պայքարի հարուստ փորձ ունեն, տվյալ դեմքում այն աստիճան միամիտ և կույր դուրս յեկան, վոր չկարողացան տեսնել ժողովրդի թշնամիների իսկական դեմքը, չկարողացան ճանաչել գտան մորթի հագած դայլերին, չկարողացան պոկել նրանց դիմակը:

Կարելի՞ յե արդյոք պնդել, վոր ԽՍՀՄ-ի տերիստորիայի վրա գործող ուստարերկրյա պետությունների գործակալների վնասարար և դիմերսիոն-լրտեսական աշխատանքը կարող է մեզ համար ինչ-վոր անսպասելի ու չեղած-չտեսնված բան հանդիսանալ: Վո՛չ, այդ չի կարելի պնդել: Այդ մասին են խոսում վերջին տաս տարվա վնասարարական ամիսերը՝ ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերում, սկսած Շախտի ժամանակաշրջանից, ակտեր, վորոնք արձանագրված են պաշտոնական պատասխանական թղթերի մեջ:

Կարելի՞ յե արդյոք պնդել, վոր վերջին ժամանակներս մենք չենք ունեցել վորևե նախազգուշացնող ազդանշան և նախազգուշացնող ցուցում՝ ֆաշիզմի տրոցկիստական-զինովյեվակական գործակալների վնասարար, լրտեսական կամ տեռորիստական գործունեյության վերաբերյալ: Վո՛չ, այդ չի կարելի պընդել: Այդպիսի ազդանշաններ յեղել են, և բոլևեկներն իրավունք չունեն մոռանալու դրանց մասին:

Ընկեր Կիրովի չարանենդ սպանությունն առաջին բուրջ նախադպուշացումն եր, վորը խոսում եր այն մասին, թե ժողովրդ-

դի թշնամիները յերկերեսանիություն կանեն և յերկերեսանիություն անելով քողարկվելու յեն բոլշևիկի, կուսակցականի դիմակի ստակ, վորպեսզի ամեն գնով վատահություն ձեռք բերեն և մեր կազմակերպությունների մեջ իրենց համար ճանապարհ բաց անեն:

«Լենինգրադի կենտրոնի» դատավարությունը, այնպես, ինչպես «Զինովյեվի-Կամենենիի» դատավարությունը, նոր հիմնավորում տվեց ընկեր Կիրովի չարանենդ սպանության փառադիր բլինող դասերին:

«Զինովյեվական-տրոցկիստական բլոկի» դատավարությունն ընդարձակեց նախորդ դատավարությունների դասերը, ակնբախորեն ցույց տալով, վոր զինովյեվականներն ու տրոցկիստներն իրենց չուրջն են համախմբում բոլոր բուժժուական թշնամի տարրերին, վոր նրանք դարձել են գերմանական վոստիկանական պահնողային բաժնի լրտեսական ու դիվերսիոն-տեռորիստական գործակալությունը, վոր յերկերեսանիությունն ու դիմակալուրումը զինովյեվականների ու տրոցկիստների միակ միջոցն ե համովիսանում մեր կազմակերպությունների մեջ սողոսկելու համար, վոր զգաստությունն ու քաղաքական սրատեառությունն ամենից ճիշտ միջոցն են համովիսանում այլպիսի սողոսկումը կանկելու համար, զինովյեվական-տրոցկիստական ավագակախումբը լիկվիդացիայի յենթարկելու համար:

Համեր (բ) կ կենտրոնական կոմիտեն ընկեր Կիրովի չարանենդ սպանության առթիվ՝ 1935 թվականի հունվարի 18-ին իր ուղարկած փակ նամակին կուսակցական կազմակերպություններին վճռականորեն նախազգուշացնում եր քաղաքական բարեհոգությունից և քարքենիական բերանաբացությունից: Փակ նամակում առաջանաւ ե.

«Պետք ե վերջ տալ ուրուսունիստական բարեհոգությանը, վորը բղխում ե այն սիսալ յենթարկությունից, թե մեր ուժերի ամսանը գուգընթաց թշնամին իբր թե պնալով ավելի ձեռնասուն ու անվնաս ե դառնում: Այդպիսի յենթարկությունն արմատապես սիսալ ե: Դա աջ թեքման բղկոցն ե, թեքում, վորն աշխատում ե բոլորին ու ամենքին համոզել, թե թշնամիները կամացում կներսողան սոցիալիզմի մեջ, թե նրանք վերջիւնիրջո իսկական սոցիալիստներ կդառնան:

Բոլշևիկների գործը չե նիրհել դափնիների վրա և քերանարցություն անել։ Մեզ վոչ թե բարեհողություն ե հարկավոր, այլ դգաստություն, իակաղան բոլշևիկներ հեղափոխական դգաստություն։ Պետք ե հիշել, վոր վորքան ավելի անհուսալի յե թշնամիների դրությունը, նրանք այնքան ավելի սիրով են դիմելու ծայրահեղ միջոցների, վորպես դատապարտվածների միակ միջոցների՝ խորհրդային իշխանության դեմ իրենց մղած պայքարում։ Պետք ե հիշել այդ և դգաստ լինել»։

Տրոցկիստական-դինովյեկան բլոկի լրտեսական-տեսուրիստական գործունեյության առթիվ 1936 թվականի հունիսի 29-ին դրած իր փակ նամակում Համբ(բ)կ կենադոնական կոմիտեն նորից կոչ եր անում կուսակցական կազմակերպություններին՝ ցուցաբերել առավելադույն դգաստություն, իրարողանալ ճանաչել ժողովրդի թշնամիներին, վորքան ել լավ դիմակավորված լինեն նրանք։ Փակ նամակում ասված ե.

«Այժմ, յերբ ապացուցված ե, վոր տրոցկիստական-դինովյեկան ճիշաղները խորհրդային իշխանության դեմ մղվող պայքարում միացնում են մեր յերկրի աշխատավորության բոլոր ամենաղաղաղած ու վոխերիմ թշնամիներին, ըն, —լրտեսներին, պրովոկատորներին, դիմերսանտներին, սպիտակ-դվլարդիականներին, կուլակներին և այլն, յերբ մի կողմից այդ տարրերի և մյուս կողմից տրոցկիստների ու դինովյեկանների միջև չնջվել են բոլոր սահմանները, — մեր բոլոր կուսակցական կազմակերպությունները, կուսակցության բոլոր անդամները պետք ե հասկանան, վոր կուսակցության բոլոր անդամները պետք ե հասկանան անհրաժեշտ ե ամեն մի ճակատամասում և ամեն մի իրադրության մեջ։ Յուրաքանչյուր բոլշևիկի անկապտելի հատկությունը ներկա պայման-չյուր բոլշևիկի անկապտելի հատկությունը ներկա պայման-ներում պետք ե լինի կուսակցության թշնամուն ճանաչել կարողանալը, վորքան ել լավ դիմակավորված լինի նա։ Նշանակում ե՝ աղդանշաններ ու նախազդուշացումներ յեղել են։

Ի՞նչ բանի եյին կոչ անում այդ աղդանշաններն ու նախազդուշացումները։

Դրանք կոչ եյին անում, վորպեսզի վերացվի կուսակցական-կազմակերպական աշխատանքի թուլությունը և կուսակցությունը գարձվի մի անառիկ ամրոց, վորքությունը մի յերկերեսաները զկարողանար մուտք դործել։

Դրանք կոչ եյին անում, վորպեսզի վերջ տրվի կուսակցական-քաղաքական աշխատանքի թերազնահատմանը և վճռական դրշագարձ կատարվի այդ աշխատանքն ամեն կերպ ուժեղացնելու կողմը, քաղաքական զգաստությունն ուժեղացնելու կողմը։

Յեկ ի՞նչ։ Փաստերը ցույց տվին, վոր մեր բնկերներն ավելի քան դժվարությամբ են ըմբռնել աղդանշաններն ու նախազդուշացումները։

Այդ մասին պերճախոս կերպով վկայում են կուսակցական փաստաթթերի ստուգման և փոխանակման կամպանիայի բնակալարի վերաբերյալ բոլորին հայտնի փաստերը։

Ինչո՞վ բացատրել այն, վոր այդ նախազդուշացումներն ու աղդանշանները պատշաճ ներգործություն չունեցան։

Ինչո՞վ բացատրել այն, վոր մեր կուսակցական ընկերները, չնայած հակախորհրդային տարրերի դեմ պայքարելու իրենց փորձառությանը, չնայած մի ամբողջ շարք նախազդուշացնով աղդանշաններին և նախազդուշացնող ցուցումներին, քաղաքա-աղդանշանների կարճատես դուրս յելան ժողովրդի թշնամինների վնասակերպ հանդեպ և լրտեսական-դիմերսակոն աշխատանքի հանդեպ։

Գուցե մեր կուսակցական ընկերներն ավելի վա՞տ են դարձել, քան առաջ եյին, ավելի պակա՞ս դիտակից ու կարդապահն դարձել։ Վո՞չ, իհարկե, վո՞։

Գուցե նրանք սկսել են վերասերվել։ Դարձյա՛լ վո՞։ Այդ-պիսի յենթադրությունը զուրկ ե վորեւ հիմքից։

Ուրեմն ինչո՞ւն ե բանը։ Վո՞րտեղից են այդ բերանաբացությունը, կուրությունը։ յուրեւնը, անհոգությունը, բարեհողությունը, կուրությունը։

Բանն այն ե, վոր մեր կուսակցական ընկերները, տարված-լինելով տնտեսական կամպանիաներով և սլեթիարի հաջողություններով՝ տնտեսական շինարարության ճակատում, պարզա-դումներով՝ են այն մի քանի շատ կարևոր փաստերի մասին, որում մոռացել են մի քանի շատ կարևոր փաստերի մասին, վորոնց մասին բոլշևիկներն իրավունք չունեն մոռանալու։ Նրանք վորոնց մասին բոլշևիկներն իրավունք չունեն մոռանալու։ Նրանք մոռացել են մի հիմնական փաստի մասին ԽՍՀՄ-ի միջազգային պատրաստության ասպարեզից և չեն նկատել յերկու շատ կարևոր փաս-դրության ասպարեզից։

տեր, վորոնք ուղղակի առնչություն ունեն կուսակցական առմասով քողարկվող և վորպես բոլշևիկ դիմակավորվող այժմյան վնասարարների, լրտեսների, դիմերսանառների ու մարտապահների հետ:

II

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒՄԸ

Այդ ի՞նչ փաստեր են, վորոնց մասին մոռացել են կամ վորոնք պարզապես չեն նկատել մեր կուսակցական ընկերները: Նրանք մոռացել են այն մասին, վոր խորհրդային էշխանությունը հաղթել ե աշխարհի միայն մի վեցերորդ մասում, վոր աշխարհի հինգ վեցերորդ մասը կազմում են կապիտալիստական ազնությունների ստիրապետությունները: Նրանք մոռացել են, վոր Խորհրդային Միությունը գտնվում ե կապիտալիստական շրջապատման պայմաններում: Մեզանում ընդունված ե շաղագավառման վրա մաններում: Մեզանում ընդունված ե շաղագավառման մասին, բայց չեն կրատել կապիտալիստական շրջապատման մասին, բայց չեն խորամուխ լինել, թե ի՞նչ բան ե այդ—կապիտալիստական շրջապատումը: Կապիտալիստական շրջապատումը—այդ դատարկ Փրազ չե, այդ շատ ուեալ և անախորժ մի յերևույթ ե: Կապիտալիստական շրջապատումը—այդ նշանակում ե, վոր կամի յերկիր—Խորհրդային Միությունը—վորն իր մոտ սոցիալիստական կարգեր ե հաստատել ե, բացի դրանից, կան շատ յերկիրներ—բուրժուական յերկիրներ—վորոնք շարունակում են կապիտալիստական կյանք վարել և վորոնք շրջապատում են Խորհրդային Միությունը, առիթի սպասելով, վորպեսզի հարձակվեն նրա վրա, ջախջախեն նրան կամ, համենայն դեպս, խարխլեն նրա հղորությունը և թուլացնեն նրան:

Այդ հիմնական փաստի մասին են մոռացել մեր ընկերները: Բայց չե՞ վոր հենց այդ ե, վոր վորոշում ե կապիտալիստական շրջապատման և Խորհրդային Միության փոխհարաբերությունների հիմքը:

Վերցնենք, որինակ, բուրժուական պետությունները: Միասներ մարդիկ կարող են կարծել, թե նրանց միջև գոյություն

ունեն բացառապես բարի հարաբերություններ, վորպես միատիպ պետությունների միջև։ Բայց այդպես կարող են կարծել միմիշայն միամիտ մարդկի։ Իրոք նրանց փոխարաբերություններն ավելի քան հեռու յեն բարի-դրացիական հարաբերություններ լինելուց։ Ազգացուցված ե, վորպես յերկու անդամ յերկու-չորս, վոր բուրժուական պետությունները միմյանց թիկունքն են ուղարկում իրենց լրտեսներին, վնասարարներին, դիվերսանտներին, իսկ յերբեմն ել մարդասպաններին, նրանց առաջադրանք են տալիս՝ բուն դնել այդ պետությունների հիմնարկներում ու ձեռնարկություններում, ստեղծել այնտեղ իրենց ցանցը և «անհրաժեշտության դեպքում» պայթեցնել նրանց թիկունքները, վորպեսդի թուլացնեն նրանց և խարիզմեն նրանց հղորությունը։ Այդպես ե բանը ներկայումս։ Բանս այդպես ե յեղել նաև անցյալում։ Վերցնենք, որինակ, Յելլոպայի՛ Նապոլեոն առաջինի ժամանակվա պետությունները։ Ֆրանսիայում այդ ժամանակից ելիս լրտեսներն ու դիվերսանտները՝ ուռաների, գերմանացիների, ալստրիացիների, անդլիացիների բանակից։ Ենիւ, ընդհակառակը, Անդլիան, գերմանական պետությունները, Ամստրիան, Ռուսաստանն իրենց թիկունքում այն ժամանակ՝ ունեյին վոչ պակաս թվով լրտեսներ ու դիվերսանտներ՝ Փրանսական բանակից։ Անդլիայի գործակալները յերկու անդամ մահափորձ են կատարել Նապոլեոնի կյանքի դեմ և մի քանի անդամ վոտքի յեն հանել Վանդեայի դյուդացիներին Ֆրանսիայում՝ Նապոլեոնի կառավարության դեմ։ Իսկ ի՞նչ երներկայացնում Նապոլեոնի կառավարությունը։ Բուրժուական մեկառավարություն, վորը խեղղեց Փրանսական հեղափոխությունը և պահպանեց հեղափոխության միայն այն արդյունքները, վորոնք ձեռնոտու եյին խոչոր բուրժուադիային։ Ինչ խոսք, վոր Նապոլեոնի կառավարությունը պարտքի տակ չեր մնում իր հարեւանների վերաբերմամբ և նույնպես ձեռնարկում եր իր դիվերսիոն միջոցառումները։ Այդպես եր անցյալում, 130 տարի առաջ։ Այդպես ե բանը ներկայումս, Նապոլեոն առաջինից 130 տարի հետո։ Այժմ Ֆրանսիայում և Անդլիայում միտում են գերմանական լրտեսներն ու դիվերսանտները և, ընդհակառակը, Գերմանիայում, իրենց հերթին, դործում են անդլո-Փրանսական լրտեսներն ու դիվերսանտները։ Ամերիկայում միտում են ճա-

ալոնական լրտեսներն ու դիվերսանտները, իսկ Ճապոնիայում՝ ամերիկականները։

Այս ե բուրժուական պետությունների փոխհարաբերությունների որենքը։

Հարց ե ծագում, թե ինչո՞ւ բուրժուական պետությունները խորհրդային սոցիալիստական պետությանը պետք ե ավելի մեղմ ու ավելի բարի-դրացիաբար վերաբերվեն, քան նույնատիպ բուրժուական պետություններին։ Ինչո՞ւ պետք ե նրանք Խորհրդային Միության թիկունքներն ավելի պակաս թվով լրտեսներ, վնասարարներ, դիվերսանտները ու մարդասպաններ ուղարկեն, քան ուղարկում են իրենց ազգակից բուրժուական պետությունների թիկունքները։ Վորտեղի՞ց եք դուք այդ վերցրել։ Մարդսիզմի տեսակետից ավելի ճիշտ չի՞ մնի արդյոք յենթադրել, վոր բուրժուական պետությունները Խորհրդային Միության թիկունքները պետք ե ուղարկեն. կրկնակի ու յեռակի ավելի վնասարարներ, լրտեսներ, դիվերսանտներ ու մարդասպաններ, քան վորեւ բուրժուական պետության թիկունքները։

Պարզ չե՞ արդյոք, վոր քանի գոյություն ունի կապիտալիստական ըրջապատռումը, մեղմանում դրյություն են ունենալու վնասարարներ, լրտեսներ, դիվերսանտները ու մարդասպաններ, վորոնց մեր թիկունքներն են ուղարկում ուղարերկրյա պետությունների գործակալները։

Այս ամենի մասին մոռացել են մեր կուսակցական ընկերները, և մոռանալով այդ մասին՝ հանկարծակի յեկած յեղան։

Ահա թե ինչո՞ւ ճարպոնագերմանական վոստիկանական պահնորդային բաժնի տրոցկիստական գործակալների լրտեսական-դիվերսիոն աշխատանքը մեր վորոշ ընկերների համար բոլորու մին անապահելի բան դուքս յեկամ։

III

ԱՐԴԻ ՏՐՈՑԿԻԶՄԸ

Այնուհետև : Պայքար մղելով տրոցկիստական դործակալների դեմ՝ մեր կուսակցական ընկերները չեն նկատել, նրանց աչքից վրիպել են, վոր այժմյան տրոցկիզմն արդեն այն չեն, ինչ նա յեղել են, ասենք, սրանից 7—8 տարի առաջ, վոր տրոցկիզմը և տրոցկիստներն այդ ժամանակում յենթարկվել են լուրջ ելուրոցիայի, վորն արմատապես փոխել են տրոցկիզմի դեմքը, վոր, նկատի ունենալով այդ, տրոցկիզմի դեմ մղվող պայքարն ել, նրա դեմ պայքարելու մեթոդներն ել պետք են արմատապես փոխվեն: Մեր կուսակցական ընկերները չեն նկատել, վոր տրոցկիզմը գաղարել են բանվոր դասակարդի ներսում քաղաքական հոսանք լինելուց, վոր տրոցկիզմը բանվոր դասակարդի ներսում քաղաքական հոսանք լինելուց, ինչպիսին եր նա սրանից մի 7—8 տարի առաջ, վեր ե ածվել այնպիսի վնասարարների, դիվերսանտների, լրտեսների ու մարդասովանների մերկասլարանոց ու անսկզբունք մի բանդայի, վորոնք դործում են ուսարեցվրյա պետությունների հետախուզական որդանների առաջադրանքներով:

Ի՞նչ բան ե քաղաքական հոսանքը բանվոր դասակարդի ներսում: Քաղաքական հոսանքը բանվոր դասակարդի ներսում—դա մի այնպիսի խոռոք կամ կուսակցություն են, վորն ունի իր վորոշակի քաղաքական կերպարանքը, պլատֆորմը, ծրագրը, վորը չի թագցնում և չի կարող թագցնել իր հայացքները բանվոր դասակարդից, այլ ընդհակառակը, իր հայացքները պրոպագանդանդա յե անում բացեիրաց ու ազնվորեն, բանվոր դասակարդի աչքերի առջև, վորը չի վախենում իր քաղաքական դեմքը բանվոր դասակարդին ցույց տալուց, չի վախենում իր իսկական նպատակներն ու խնդիրները բանվոր դասակարդի առջև ցուցա-

դրելուց, այլ ընդհակառակը, բացահայտ ու ազնիվ կերպով դնում ե բանվոր դասակարդի մեջ նրա համար, վորպեսզի նրան համոզի իր հայացքների ճշմարիտ լինելը: Տրոցկիզմն անցյալում, մի 7—8 տարի սրանից առաջ, այդպիսի քաղաքական հոսանքներից մեկն եր բանվոր դասակարդի ներսում, ճշմարիտ ե, հակալենինյան և այդ պատճառով ել խորապես սխալ, բայց այնուամենայնիվ քաղաքական հոսանք:

Կարելի՞ յե արդյոք ասել, վոր այժմյան տրոցկիզմը, ասենք 1936 թվականի տրոցկիզմը, քաղաքական հոսանք ե հանդիսանոյմ բանվոր դասակարդի ներսում: Վո՞չ, այդ բանը չի կարելի ասել: Ինչո՞ւ: Վորովհետև արդի տրոցկիստները վախենում են իրենց իսկական դեմքը բանվոր դասակարդին ցույց տալուց, վախենում են նրա առջև իրենց իսկական նպատակներն ու ինդիբներները բաց անելուց, ինամ քով թագցնում են բանվոր դասակարդից իրենց քաղաքական կերպարանքը, վախենալով, վոր յեթե բանվոր դասակարդն իմանա իրենց իսկական մտադրությունները, կնզովի նրանց՝ վորպես խորթ մարդկանց և նրանց կը իրենից Դրանով ել իսկապես բացատրվում ե այն, վոր տրոցկիստական աշխատանքի հիմնական մեթոդն այժմ հանդիսանում է վոչ թե իրենց հայացքների բացահայտ ու ազնիվ պրոպագանդան բանվոր դասակարդի մեջ, այլ իրենց հայացքների քողարկումը, իրենց հակառակորդների հայացքների ստորագրությունները և քննողական գովարանումը, իրենց սեփական հայացքների փարիսեցիական ու կեղծ կուսկրտումը ցեխի մեջ:

1936 թվականի դատավարության ժամանակ, յեթե հիշում եք, Կամենեվն ու Զինովյեվը վճռականորեն ժխտում եյին, թե իրենք վորեւե քաղաքական պլատֆորմ ունեն: Նրանք լիակատար հարավորություն ունեյին դատավարության ժամանակ ծավալուում իրենց քաղաքական պլատֆորմը: Ակաւյն նրանք այդ չարին, հայտարարելով, վոր իրենք վոչ մի քաղաքական պլատֆորմ չունեն: Վոչ մի կառկած չի կարող լինել, վոր նրանք յերկուսն ել ստում եյին, ժխտելով իրենց պլատֆորմ ունենալը: Այժմ նույնիակ կույրերը տեսնում են, վոր նրանք ունեցել են իրենց քաղաքական պլատֆորմը: Բայց նրանք ինչո՞ւ եյին ժըմատում իրենց վորեւե քաղաքական պլատֆորմ ունենալը: Վորովհետև նրանք վախենում եյին իրենց իսկական քաղաքական դեմքը:

քը բաց անելուց, նրանք վախենում եյին ԽՍՀՄ-ում կապիտա-
լիզմի ռեստավրացիայի իրենց իսկական պլատֆորմը ցուցադրե-
լուց, վախենալով, վոր այդպիսի պլատֆորմը զգվանք կառա-
ջացնի բանվոր դասակարգի մեջ:

1937 թվականի դաստիարակության ժամանակ Պյատակովը,
Թաղեկը և Սոկոլնիկովը կանդնեցին այլ ուղու վրա: Նրանք չե-
յին ժիտում, վոր տրոցկիստներն ու զինովյեկականները քաղա-
քական պլատֆորմ ունեն: Նրանք ընդունեցին, վոր իրենք վորոշ
քաղաքական պլատֆորմ ունեն, ընդունեցին և այդ պլատֆորմը
ծավալեցին իրենց ցուցմունքների մեջ: Բայց ծավալեցին այն
վոչ թե նրա համար, վոր կոչ անեն բանվոր դասակարգին, կոչ
անեն ժողովրդին՝ պաշտպանելու տրոցկիստական պլատֆորմը,
այլ նրա համար, վոր անիծեն և նշանակեն այն վորպես հակա-
ժողովրդական և հակասլորդետարական մի պլատֆորմ: Կապի-
տալիզմի ռեստավրացիա, կոլտնտեսությունների ու խորհանու-
սությունների լիկվիդացիա, շահագործման սիստեմի վերականո-
նում, դաշնաք Գերմանիայի ու Ճապոնիայի Փաշիստական ուժե-
րի հետ՝ Խորհրդային Միության դեմ պատերազմը մտեցնելու
համար, հանուն պատերազմի և խաղաղության քաղաքականու-
թյան դեմ պայքարելու համար, Խորհրդային Միության տերի-
տորիալ անդամահատում՝ հանձնելով Ռուբախնան գերմանացի-
ներին, իսկ Պրիմորյեն՝ ճապոնացիներին, Խորհրդային Միու-
թյան ռազմական պարտության նախաղատրամատում՝ թշնամի
պետությունների նրա վրա հարձակվելու դեպքում և՝ վորպես
այդ խնդիրներն իրագործելու միջոց՝ վնասաբարություն, դի-
մերսիա, անհատական տեսոր խորհրդային իշխանության դեկա-
վարների դեմ, լրտեսություն հոգուտ գերման-ճապոնական Փա-
շիստական ուժերի—այս և այժմյան տրոցկիզմի քաղաքական այն
պլատֆորմը, վորը ծավալեցին Պյատակովը, Թաղեկը և Սոկո-
լնիկովը: Հասկանալի յէ, վոր այդպիսի պլատֆորմը տրոցկիստ-
ները չեյին կարող չթաղցնել ժողովրդից, բանվոր դասակարգից:
Յեկ նրանք այն թաղցնում եյին վոչ միայն բանվոր դասակար-
գից, այլ նաև տրոցկիստական մասսայից, և վոչ միայն տրոց-
կիստական մասսայից, այլ նույնիսկ զեկավար տրոցկիստական
վերնախավից, վորը բաղկացած եր 30—40 հոգուց կազմված
մարդկանց փոքրաթիվ խմբակից: Յերբ Ռադեկն ու Պյատակովը

Տրոցկուց թույլատվություն են պահանջել արոցկիստների 30—40
հոգուց բաղկացած փոքրիկ կոնֆերենցիա գումարելու՝ այդ
պլատֆորմի բնույթի մասին ինֆորմացիա տալու համար, Տրոց-
կին այդ արգելել ե նրանց, ասելով, թե նպատակահարմար
չե պլատֆորմի իրական բնույթի մասին խոսել տրոցկիստների
նույնիսկ փոքրիկ խմբակի հետ, վորովհետև նման «ուղերացիան»
կարող ե պառակտում առաջացնել:

«Քաղաքական գործիչներ», վորոնք թագյունում են իրենց
հայացքները, իրենց պլատֆորմը վոչ միայն բանվոր դասակար-
գից, այլ նաև տրոցկիստական մասսայից, և վոչ միայն տրոց-
կիստական մասսայից, այլ նաև տրոցկիստների զեկավար վեր-
նախավից—այս և արդի տրոցկիզմի կերպարանքը:

Բայց գրանից բլիսում ե, վոր արդի տրոցկիզմն այլևս չի
կարելի քաղաքական հոսանք անվանել բանվոր դասակարգի մեջ:

Արդի տրոցկիզմը քաղաքական հոսանք չե բանվոր դասա-
կարգի մեջ, այլ վնասաբարների, դիվերսանտների, հետախուզ-
ների, լրտեսների, մարդասպանների մի անսկզբունք և գաղա-
փարազուրկ բանդա, բանվոր դասակարգի վոխերիմ թշնամինե-
րի մի բանդա, վորոնք ոտարերկրյա պետությունների հետա-
խուզական որդանների մոտ գործում են վարձով:

Այս և տրոցկիզմի վերջին 7—8 տարվա եվոլուցիայի անվի-
ճելի արդյունքը:

Այս և տարբերությունն անցյալի տրոցկիզմի և այժմյան
տրոցկիզմի միջև:

Մեր կուսակցական ընկերների սիամն այն և, վոր նրանք
չեն նկատել անցյալի տրոցկիզմի և այժմյան տրոցկիզմի այդ
խոր տարբերությունը: Նրանք չեն նկատել, վոր արոցկիստներն
արդեն վաղուց դադարել են գաղափարական մարդիկ լինելուց,
վոր տրոցկիստներն արդեն վազուց դարձել են մեծ ճանապարհի
ավազակներ՝ ընդունակ ամեն մի գարշելիության, ընդունակ
ամեն մի նորկալիության, կիզ մինչև լրտեսությունն ու իրենց
հայրենիքին ուղղակի դավաճանելլ, միայն թե կարողանան վա-
տություն անել խորհրդային պետությանը և խորհրդային իշ-
խանությանը: Նրանք այդ չնկատեցին, ուստի և չկարողացան
իր ժամանակին վերակառուցվել, վորակեսդի պայքար մղեն տրոց-
կիստների դեմ նոր ձևով, ավելի վճռաբար:



Ահա թե ինչու տրոցկիստների վերջին տարիների նողկալիությունները մեր մի քանի կուսակցական ընկերների համար կատարյալ անակնկալ հանդիսացան:

Այսուհետեւ: Վերջապես, մեր կուսակցական ընկերները չեն նկատել այն, վոր եյական տարբերություն կա մի կողմից այժմ-յան վնասարարների ու դիվերսանտների միջև, վորոնց մեջ Փաշիզմի տրոցկիստական գործակալները բավական ակտիվ դեր են խաղում, և մյուս կողմից Շախտիի ժամանակների վնասարարների ու դիվերսանտների միջև:

Առաջին: Շախտիականները և արդյունաբերական կուսակցության անդամները մեզ համար բացահայտորեն խորթ մարդիկ եյին: Նրանք մեծ մասամբ նախկին ձեռնարկատերեր եյին, հին տերերի ժամանակվա նախկին կառավարիչներ, հին փայտիրական ընկերությունների նախկին անդամներ, կամ պարզապես հին բուրժուական մասնագետներ, վորոնք քաղաքականապէս բացահայտորեն թշնամի եյին մեզ: Մեր մարդկանցից վոչ վոք չեր տարակուսում այդ պարոնների քաղաքական դեմքի իսկության նկատմամբ: Ասենք, շախտիականներն իրենք ել չեյին թաղ-ցնում իրենց թշնամական վերաբերմունքը խորհրդային հասարակարդի նկատմամբ: Զի կարելի նույնն ասել այժմյան վնասարարների ու դիվերսանտների, տրոցկիստների մասին: Այժմյան վնասարարներն ու դիվերսանտները, տրոցկիստները, դրանք մեծ մասամբ: Գրականում կուսակցական տոմս ունեցող կուսակցական մարդիկ են, — հետեւաբար, ձեւականորեն վոչ խորթ մարդիկ: Յեթե հին վնասարարները մեր մարդկանց դեմ եյին դնում, ապա նոր վնասարարները, ընդհակառակը, քծնում են մեր մարդկանց առջև, դովաբանում են մեր մարդկանց, ստորագրություն են անում նրանց առջև նրա համար, վորպեսզի վստահություն ձեռք բերեն: Ինչպես տեսնում եք, տարբերությունն եյական ե:

Եերկրորդ: Շախտիականների և արդյունաբերական կուսակցության անդամների ուժն այն եր, վոր նրանք ավելի կամ պաշտով անհրաժեշտ տեխնիկական գիտելիքների տեր եյին, մինչդեռ մեր մարդիկ, վորոնք չունեյին այդպիսի գիտելիքներ, հարկադրված եյին սովորել նրանցից: Այդ հանդամանքը Շախտիի ժամանակական վնասարարներին մեծ առավելություն եր տալիս, նրանց հնարավորություն ե:

անելու ազատ ու անարգել, նրանց հնարավորություն եր տալիս մեր մարդկանց խարել տեխնիկապէս: Նույնը չեն այժմյան վնասարարները, տրոցկիստները: Այժմյան վնասարարները վոչ մի տեխնիկական առավելություն չունեն մեր մարդկանց համեմատությամբ: Ընդհակառակը, տեխնիկապէս մեր մարդիկ ավելի պատրաստված են, քան այժմյան վնասարարները, քան տրոցկիստները: Շախտիի ժամանակաշրջանից մինչեւ մեր որերն անցած ժամանակվա ընթացքում մեղ մոտ աճել են տասնյակ հազարավոր իսկական, տեխնիկապես կոփած բոլցելիկյան կադրեր: Կարելի յեր հիշատակել հաղարավոր ու տասնյակ հազարավոր տեխնիկապէս աճած բոլցելիկյան դեկավարների, վորոնց համեմատությամբ այդ բոլոր Պյատակովներն ու Լիվշիցները, Շեստովներն ու Բողուևալսկիները, Մուրալովներն ու Դրորնիսները դատարկ շաղակրատներ և նախապատրաստական դատարանի աշակերտներ են տեխնիկական պատրաստության տեսակետից: Այդ գեաքում ինչի՞ մեջ ե արդի վնասարարների, տրոցկիստների ուժը: Նրանց ուժը կուսակցական տոմսի մեջ, կուսակցական տոմս ունենալու մեջ ե: Նրանց ուժն այն ե, վոր կուսակցական տոմսը քաղաքական վստահություն ե տալիս նրանց և նրանց համար մուտք ե բաց անում դեպի մեր բոլոր հիմնարկներն ու մազմակերպությունները: Նրանց առավելությունն այն ե, վոր կուսակցական տոմս ունենալով և իրենց խորհրդային իշխանության բարեկամ ձևացնելով, նրանք խարում եյին մեր մարդկանց քաղաքականապէս, ի չարն եյին գործ դնում վստահությունը, վնասարարություն եյին անում սուսուփուս և մեր պետական գաղտնիքները հայտնում եյին Խորհրդային Միության թշնամիներին: Մի «առավելություն», վորը կասկածելի յե իր քաղաքական ու բարոյական արժեքով, բայց այնուամենայնիվ օսուավելություն» ե: Այդ «առավելությամբ» ել հենց բացատրվում ե այն հանդամանքը, վոր տրոցկիստական վնասարարները, վորպես կուստոմսավոր մարդիկ, վորոնք մուտք ունեյին մեր հիմնարկների ու կազմակերպությունների բոլոր տեղերը, ուղղակի գյուտ հանդիսացան ոտարերկրյա պետությունների հետախուզական որդանների համար:

Մեր վորոշ կուսակցական ընկերների սիալն այն ե, վոր նրանք չեն նկատել, չեն համկացել հին և նոր վնասարարների

միջև, շախտիականների ու տրոցկիստների միջև յեղած այդ ամբողջ տարբերությունը, և չնկատելով այդ՝ չեն կարողացել ժամանակին վերառվառուցվել նոր մնասարարների գեմ նոր ձևով պայքար մղելու համար։

IV

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՏՎԵՐՈՏ ԿՈՊԱՄԵՐԸ

Սրանք են մեր միջազգային ու ներքին դրության բնագավառից վերցված հիմնական փաստերը, վորոնց մասին մոռացել են կամ վորոնք չեն նկատել մեր շատ կուսակցական ընկերներ։

Ահա թե ինչու մեր մարդիկ հանկարծակիի յեկան մնասարարության և դիվերսիայի գործում վերջին տարիներս տեղի ունեցած դեպքերից։

Կարող են հարց տալ. բայց ինչո՞ւ մեր մարդիկ չեն նկատել այդ ամենը, ինչո՞ւ նրանք մոռացել են այդ ամենի մասին։

Վորտեղից առաջ յեկան այդ բոլորը՝ մոռացկոտությունը, կուրությունը, անհոգությունը, բարեհոգությունը։

Այդ մի որդանական արաւո չե՞ արդյոք մեր մարդկանց աշխատանքի մեջ։

Վո՞չ, այդ որդանական արաւո չե։ Այդ—ժամանակակոր յերեւույթ ե, վորք կարող ե արագորեն լիկվիդացիայի յենթարկվել մեր մարդկանց կողմից վօրոշ ջանքերի առկայության դեպքում։

Ուրեմն ինչո՞ւ ե բանը։

Բանն այն ե, վոր մեր կուսակցական ընկերները վերջին տարիներում ամբողջապես վլանված են յեղել տնտեսական աշխատանքով, նրանք ծայր աստիճանի տարված են յեղել տնտեսական հաջողություններով, և տարված լինելով այդ ամբողջ գործով, մոռացել են մնացած ամեն բանի մասին, յերեսի վրա յեն թողել բոլոր մնացածը։

Բանն այն ե, վոր տարված լինելով տնտեսական հաջողություններով, նրանք այդ գործի մեջ ակտեցին տեսնել ամեն բանի սկիզբը և վերջը. իսկ այնպիսի գործերին, ինչպիսիք են Խոր-

Հըրուային Միության միջազգային դրությունը, կապիտալիստա-
կան շրջապատռումը, կուսակցության քաղաքական աշխատանքի
ուժեղացումը, պայքարը վնասարարության դեմ և այլն, —պար-
զապես սկսեցին ուշադրություն չղարձնել, կարծելով, վոր ար-
բոլոր հարցերը յերկրորդական կամ նույնիսկ յերրորդական գործ
են ներկայացնում:

Հաջողությունները և նվաճումներն, իհարկե, մեծ գործ են:
Մեր հաջողությունները սոցիալիստական շինարարության բնա-
դավառում իսկապես հսկայական են: Բայց հաջողությունները,
ինչպես և աշխարհում ամեն բան, ունեն նաև իրենց ստվերուտ
կողմերը: Քաղաքականության մեջ քիչ փորձառություն ունեցող
մարդկանց մոտ մեծ հաջողություններն ու մեծ նվաճումները հա-
ճախ ծնում են անհոգություն, բարեհոգություն, ինքնադու-
թյուն, չափից դուրս ինքնավտահություն, ամբարտավանու-
թյուն, պարզենկոտություն: Դուք չեք կարող ժխտել, վոր վեր-
ջին ժամանակներս մեղանում անթիվ ու անհամար պարզենկոտու-
ներ են յերևացել: Զարմանալի չե, վոր սոցիալիստական շինա-
րարության բնագավառում ձեռք բերված մեծ ու լուրջ հաջողու-
թյունների այս իրադրության մեջ ստեղծվում են պարզենկոտու-
թյան տրամադրություններ, մեր հաջողությունների պարագա-
յին մանիֆեստացիայի տրամադրություններ, ստեղծվում են մեր
թշնամիների ուժերը թերադնահատելու տրամադրություններ,
մեր ուժերը գերազնահատելու տրամադրություններ, և վորպես
այդ ամենի հետեւանք — յերևան ե գալիս քաղաքական կուրու-
թյունը:

Այստեղ յես պետք ե միքանի խոսք ամեմ՝ հաջողությունների
հետ կապված վտանգների մասին, նվաճումների հետ կապված
վտանգների մասին:

Դժվարությունների հետ կապված վտանգների մասին մենք
փորձով գիտենք: Ահա արդեն միքանի տարի յե, վոր պայքար
ենք մղում այդ տեսակ վտանգների դեմ և պետք ե ասել՝ վոչ
առանց հաջողության: Վոչ-կայուն մարդկանց մոտ դժվարու-
թյունների հետ կապված վտանգները հաճախ առաջ են բերում
վհասարակության, իր ուժերին չհավատալու տրամադրություններ,
հոռետեսության արամադրություններ: Յեվ, ընդհակառակը,
այստեղ, վորտեղ դործը վերաբերում ե դժվարություններից բըդ-

խող վտանգները հաղթահարելում, մաքդիկ կոփվում են այդ պայ-
քարում և պայքարից դուրս են գալիս վորպես իրոք պողպատա-
կուու բոլշևիներ: Այս ե դժվարությունների հետ կապված
վտանգների բնությունը: Սրանք են դժվարությունների հաղթա-
հարման արդյունքները:

Բայց կան այլ տեսակ վտանգներ, հաջողությունների հետ
կապված վտանգներ, նվաճումների հետ կապված վտանգներ:
Այո՛, այո՛, ընկերներ, հաջողությունների հետ, նվաճումների
հետ կապված վտանգներ: Այդ վտանգների երթյունն այն ե,
վոր քաղաքականության մեջ քիչ փորձված և շատ բան չտեսած
մարդկանց մոտ հաջողությունների իրադրությունը, հաջողու-
թյուն՝ հաջողության հետեւից, նվաճում՝ նվաճման հետեւից,
ողանների գերակատարում՝ գերակատարման հետեւից, ա-
յսաջ և բերում անհոգության ու ինքնագոհության տրամադրու-
թյուններ, ստեղծում ե պարագային հանդեսների և փոխադարձ
վողջույնների մթնոլորտ, վորոնք ապանում են չափի զգացումը
և բթացնում քաղաքական հոտառությունը, ապամագնիսացնում
են մարդկանց և մղում դեպի այն, վոր նիրհեն դափնիների վրա:

Զարմանալի չե, վոր ամբարտավանության և ինքնագու-
թյան այդ արբեցնող մթնոլորտում, պարագային մանիֆեստա-
ցիաների և աղմկալից ինքնագովության մթնոլորտում մարդիկ
մոռանում են մեր յերկրի ճակատագրի համար առաջնակարգ նշա-
նակություն ունեցող միքանի եյական փաստերի մասին, մարդիկ
սկսում են չնկատել այնպիսի անախործ փաստեր, ինչպիսիք են
կապիտալիստական շրջապատումը, վնասարարության նոր ձևե-
րը, մեր հաջողությունների հետ կապված վտանգները և այլն:
Կապիտալիստական շրջապատում: Բայց չե՞ վոր դա դատարկ
բան ե: Ի՞նչ նշանակություն կարող ե ունենալ այդ բոլոր մանրուն-
քը, յերբ մենք կատարում ու գերակա-
տարում ենք մեր տնտեսական պլանները: Վնասարարության նոր
ձևերը, պայքար տրոցկիզմի գե՞մ: Այդ բոլորը դատարկ բաներ
են: Ի՞նչ նշանակություն կարող ե ունենալ այդ բոլոր մանրուն-
քը, յերբ մենք կատարում ու գերակատարում ենք մեր տնտե-
սական պլանները: Կուտակցական կանոնադրությո՞ւն, կուտա-
գանների ընտրականությո՞ւն, կուտակցական դեկալարների հաշ-
ուետվությո՞ւն կուտակցական մասսայի առջև: Կարիք կա՞ արդյոք

այդ բոլորի՞ն Արժեկ միթե ընդհանրապես գլուխ ցավացնել այդ բոլոր մանրունքների համար, յեթե մեղանում տնտեսությունն աճում է, իսկ բանվորների և գյուղացիների նյութական դրաւթյունն ավելի ու ավելի յե բարելավվում։ Այդ բոլորը դատարկ բաներ են։ Պանները գերակատարում ենք, մեղ մոտ կուսակցությունը վաստ չե, կուսակցության կենտրոմը նույնակես վաստ չե—ել ի՞նչ ե պետք մեզ։ Տարրինակ մարդիկ են նատած այնտեղ՝ Մոսկվայում, կուսակցության կենտրոմում—ինչվոր հարցեր են հնարում, խոսում են ինչվոր մշասարարության մասին, իրենք չեն քնում, ուրիշներին ել չեն թողնում քնելու...

Ահա ձեզ ակնառու որինակ, թե ինչպես հեշտությամբ և «պարզ կերպով» քաղաքական կուրությամբ են վարակվում մեր միքանի անփորձ ընկերները՝ տնտեսական հաջողություններով դիմապույտ կերպով տարվելու հետևանքով։

Սրանք են հաջողությունների հետ, նվաճումների հետ կապված վտանգները։

Սրանք են պատճառները, վոր մեր կուսակցական ընկերները, տարվելով տնտեսական հաջողություններով, մոռացել են միջադղային ու ներքին բնույթի փաստերի մասին, վորոնք եյական նշանակություն ունեն Խորհրդային Միության համար, և չեն նկատել մի ամբողջ շարք վտանգներ, վորոնք շրջապատել են մեր յերկիրը։

Սրանք են մեր անհոգության, մոռացկուության, բարեհոգության, քաղաքական կուրության արմատները։

Սրանք են մեր տնտեսական ու կուսակցական աշխատանքի թերությունների արմատները։

V

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ի՞նչպես վերացնել մեր աշխատանքի այս թերությունները՝ ի՞նչ ե հարկավոր անել դրա համար։

Անհրաժեշտ ե իրականացնել հետեւյալ միջոցառումները։

1) Անհրաժեշտ ե նախ և առաջ այս կամ այն գերատեսչության գծով «ընթացիկ հարցերի» մեջ խրված մեր կուսակցական ընկերների ուշադրությունը լրջել միջազգային և ներքին բնույթի քաղաքական մեծ հարցերի կողմը։

2) Անհրաժեշտ ե մեր կատակցության քաղաքական աշխատանքը հասցնել հարկ յեղած բարձրության, անկյունաչար դարձնելով կուսակցական, խորհրդային և տնտեսական կադրերի քաղաքական լրացման ու բոլշեկույան կոփման խնդիրը։

3) Անհրաժեշտ ե պարզաբանել մեր կուսակցական ընկերներին, վոր տնտեսական հաջողությունները, վորոնց նշանակությունն անվիճելիորեն շատ մեծ ե և վորոնց մենք ձգտելու ու հասնելու յենք նաև առաջիկայում՝ որ-որի վրա, տարեց-տարի, —այնուամենայիկ չեն սպառում մեր սոցիալիստական շինարարության ամբողջ գործը։

Պարզաբանել, վոր տալիքրատ կողմերը, վորոնք կապված են տնտեսական հաջողությունների հետ և արտահայտվում են ինքնազմությամբ, անհոգությամբ, քաղաքական հոսառության բթացմամբ, կարող են վերացվել միայն այն դժվարում, յեթե տնտեսական հաջողությունները զուգակցվում են կուսակցական շինարարության և մեր կուսակցության քաղաքական ծավալուն աշխատանքի հաջողությունների հետ։

Պարզաբանել, վոր տնտեսական հաջողություններն իրենք 25

տրանց հաստատում և տեւական լինելը, ամբողջությամբ ու լիովին կախված են կուսակցական-կազմակերպական և կուսակցական-քաղաքական աշխատանքի հաջողություններից, վոր առանց այդ պայմանի տնտեսական հաջողությունները կարող են ավագի վրա կառուցված դուրս գալ:

4) Անհրաժեշտ ե հիշել և յերբեք չմոռանալ, վոր կապիտալիստական շրջապատումը, այն հիմնական փաստն ե հանդիսանում, վորը վորոշում ե Խորհրդային Միության միջազգային դրությունը:

Հիշել և յերբեք չմոռանալ, վոր քանի կա կապիտալիստական շրջապատումը, լինեն նաև վնասարարների, դիվերսանտներ, լրտեսներ, տեռորիստներ, վորոնց Խորհրդային Միության թիկունքներն են ուղարկում ոտարերկրյա պետությունների հետախուզական որդանները, հիշել այդ մասին և պայքար մղել այն ընկերների դեմ, վորոնք թերագնահատում են կապիտալիստական շրջապատման փաստի նշանակությունը, վորոնք թերագնահատում են վնասարարության ուժերն ու նշանակությունը:

Պարզաբանել մեր կուսակցական ընկերներին, վոր վոչ մի տեսակ տնտեսական հաջողություն, վորքան ել այն մեծ լինի, չի կարող չեղյալ դարձնել կապիտալիստական շրջապատման փաստը և այդ փաստից բղխող արդյունքները:

Չեռք առնել անհրաժեշտ միջոցներ նրա համար, վորպեսդի մեր ընկերները, կուսակցական ու վոչ-կուսակցական բոլշևիկները, հնարավորություն ունենան ծանոթանալու ոտարերկրյա հետախուզական որդանների վնասարար-դիվերսիոն՝ և լրտեսական աշխատանքի նպատակներին ու խնդիրներին, պրակտիկային ու տեխնիկային:

5) Անհրաժեշտ ե պարզաբանել մեր կուսակցական ընկերներին, վոր տրոցիխտները, վորոնք ներկայացնում են ոտարերկրյա հետախուզական որդանների դիվերսիոն-վնասարար ու լրտեսական աշխատանքի ակտիվ տարրերը, վաղուց արդեն դադարել են բանվոր դասակարգի ներսում քաղաքական հոսանք լինելուց, վոր նրանք վաղուց արդեն դադարել են ծառայելուց վորեւ դադարի, վորը համատեղելի յե բանվոր դասակարգի շահերի հետ, վոր նրանք վեր են ածվել վնասարարների, դիվերսանտների, լրտեսների, մարդասալանների անսկզբունք ու դադարաւ-

գուրք մի բանվայի, վորոնք ոտարերկրյա հետախուզական որդանների մոտ աշխատում են վարձով:

Պարզաբանել, վոր արդի տրոցիխտմի դեմ մղվող պայքարում այժմ հարկավոր են վոչ թե հին մեթոդներ, վոչ թե դիմուն սիայի մեթոդներ, այլ նոր մեթոդներ, արմտությունի անելու և ջախճախելու մեթոդներ:

6) Անհրաժեշտ ե պարզաբանել մեր կուսակցական ընկերներին արդի վնասարարների և Շախտիի ժամանակաշրջանի վնասարարների միջև յեղած տարբերությունը, պարզաբանել, վոր յեթե Շախտիի ժամանակաշրջանի վնասարարները մեր մարդկանց խարսում եյին տեխնիկայով, ոգտագործելով նրանց տեխնիկան հետամնացությունը, առաջ արդի վնասարարները, վորոնք ունեն կուսակցական տոմս, մեր մարդկանց խարսում են իրենց նկատմամբ՝ վորպես կուսակցության անդամների նկատմամբ՝ յեղած քաղաքական վաստակությամբ, ոգտագործելով մեր մարդկանց քաղաքական անհոգությունը:

Անհրաժեշտ ե տեխնիկային տիրապետելու հին լրդունդը, վորը համապատասխանում եր Շախտիի ժամանակաշրջանին, լրացնել կադրերի քաղաքական դաստիարակության, բոլցեկզմին տիրապետելու և մեր քաղաքական դյուրահավատությունը լիկվիդացիայի յենթարկելու լողունգով, մի լողունգով, վորը լիկվիդին համապատասխան լինի այժմյան մեր ապրած ժամանակաշրջանին:

Կարող են հարցնել, թե չե՞ր կարելի արդյոք սրանից մի տասը տարի առաջ, Շախտիի ժամանակաշրջանում միանդամից տալ յերկու լողունգներն ել, —թե՛ առաջին լողունգը՝ տեխնիկային տիրապետելու մասին, թե՛ յերկրորդ լողունգը՝ կադրերի քաղաքական դաստիարակության մասին։ Վո՞չ, չեր կարելի՛ Մեզանում, բոլշևիկյան կուսակցության մեջ, գործերն արդպես չեն կատարվում։ Հեղափոխական շարժման շրջադարձային մոմենտներում միշտ առաջ ե քաշվում մեկ վորեւ հիմնական լողունգ, վորպես հանգուցային, նրա համար, վորպեսդի նրանից կառչելով, նրա միջոցով ձիգ տրվի ամբողջ շղթան։ Լինին այսպես ե սովորեցրել մեզ։ գտեք հիմնական ողակը մեր աշխատանքի շղթայի մեջ, կառչեցեք դրանից և ձգեցեք այն նրա համար, վորպեսդի նրա միջոցով դուրս քաշենք ամբողջ շղթան և առաջ ընթանանք։ Հե-

ղափոխական շարժման պատմությունը ցույց է տալիս, վոր այդ տակտիկան միակ ճիշտ տակտիկան է : Շախտիի ժամանակաշրջանում մեր մարդկանց թուլությունն իրենց տեխնիկական հետամնացության մեջ եր : Վոչ թե քաղաքական, այլ տեխնիկական հարցերն եյին այն ժամանակ մեր թուլլ տեղը կազմում : Ինչ վերաբերում է այն ժամանակվա վնասարարների նկատմամբ մեր ունեցած քաղաքական վերաբերմունքին, առաջ այն միանդամայն պարդ եր, վորպես բոլշևիկների վերաբերմունք քաղաքականապես խորթ մարդկանց նկատմամբ : Մեր այդ տեխնիկական թուլությունը մենք վերացրինք նրանով, վոր տավինք տեխնիկային տիրապետելու լողունքը և անցած ժամանակաշրջանում դաստիարակեցինք տասնյակ ու հարյուր հաղարավոր տեխնիկապես կոփած բոլշևիկյան կադրեր : Այլ բան ե այժմ, յերբ մենք արդեն ունենք տեխնիկապես կոփած բոլշևիկյան կադրեր, և յերբ վնասարարների դերում հանդես են դալիս վոչ թե բացահայտորեն խորթ մարդիկ, վորոնք, ասենք նաև այն, վոչ մի տեխնիկական առավելություն չունեն մեր մարդկանց համեմատությամբ, այլ այնպիսի մարդիկ, վորոնք կուսակցական տոմս ունեն և վայելում են կուսակցության անդամի բոլոր իրավունքները : Այժմ մեր մարդկանց թուլությունը վոչ թե տեխնիկական հետամնացությունն է, այլ քաղաքական անհոգությունը, կույր վստահությունը պատահականորեն կուսակցական տոմս ստացած մարդկանց նկատմամբ, մարդկանց վոչ թե ըստ նրանց քաղաքական դեկլարացիաների, այլ ըստ նրանց աշխատանքի արդյունքների ստուգելու բացակայությունը : Այժմ մեզ համար հանդուցային հարց և հանդիսանում վոչ թե մեր կադրերի տեխնիկական հետամնացության վերացումը, վորովհետեւ հիմնականում այդ արդեն վերացլած է, այլ քաղաքական անհոգության և պատահականորեն կուսակցական տոմս ստացած վնասարարների նկատմամբ յեղած քաղաքական դյուրահավատության վերացումը :

Այս ե արմատական տարբերությունը կադրերի համար մըղ-վող պայքարի գործում՝ Շախտիի ժամանակաշրջանի հանդուցային հարցի և ներկա ժամանակաշրջանի հանդուցային հարցի միջև :

Ահա թե ինչու մենք սրանից տասը տարի առաջ չեյինք կարող տալ և չպետք ե տայինք միանդամից յերկու լողունդ՝ թե՝

տեխնիկային տիրապետելու լողունդը և թե՝ կադրերի քաղաքական դաստիարակության լողունդը :

Ահա թե ինչու տեխնիկային տիրապետելու հին լողունդն անհրաժեշտ ե այժմ լրացնել նոր լողունդով՝ բոլշևիզմին տիրապետելու, կադրերի քաղաքական դաստիարակության և մեր քաղաքական անհոգությունը վերացնելու լողունդով :

7) Անհրաժեշտ ե ջախջախել և ուեն դցել այն նեխած թեորիան, թե մեր յուրաքանչյուր առաջնալացումով դաստիարակյին պայքարը մեղանում պետք է, իբրև թե, ավելի ու ավելի մարի, թե մեր հաջողություններին զուգընթաց, դասակարգային թշնամին, իբրև թե, ավելի ու ավելի ձեռնասում ե դառնում :

Դա վոչ միայն նեխած թեորիա յէ, այլև վտանգավոր թեորիա յէ, վորովհետեւ դա քննեցնում ե մեր մարդկանց, թակարգի մեջ և գցում նրանց, իսկ դասակարգային թշնամուն հարավորություն ե տալիս կազդուրվելու՝ Խորհրդային իշխանության գեմ պայքար մղելու համար :

Ընդհակառակը, վորքան ավելի առաջ ընթանանք, վորքան ավելի մեծ հաջողություններ ունենանք, այնքան ավելի գահործող դասակարգերի մնացորդները, այնքան ավելի շուտ պետք ե դիմեն նրանք պայքարի ավելի սուր ձեւերի, այնքան ավելի վատություն են անելու նրանք խորհրդային պետությանը, այնքան ավելի կառչելու յն պայքարի ամենակատաղի միջոցներին, վորպես դաստակարտվածների վերջին միջոցների :

Պետք ե նկատի ունենալ, վոր ջախջախված դաստիարագերի մնացորդները ԽՍՀՄ-ում միայնակ չեն : Նրանք ուղղակի ոժանդակություն ունեն ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս գտնվող մեր թշնամիններից : Սիսալ կլիներ կարծել, թե դասակարգային պայքարի վոլորտը սահմանափակված ե ԽՍՀՄ-ի սահմաններով : Յեթե դասակարգային պայքարի մի ծայրը գործում ե ԽՍՀՄ-ի շրջանակներում, առաջ նրա մյուս ծայրը ձգվում, հասնում ե մեզ շրջապատող բուրժուատկան պետությունների սահմանները : Այդ չեն կարող չգիտենալ ջախջախված դասակարգերի մնացորդները : Յեղ հանց այն պատճառով, վոր նրանք գիտեն այդ, նրանք այսուհետեւ ել չարունակելու յեն իրենց կատաղի վոտնձգությունները :

Այդ ե սովորեցնում մեղ պատմությունը։ Այդ ե սովորեց—նում մեզ լենինկոմը։

Անհրաժեշտ ե այդ բոլորը հիշել և արթուն կենալ։

8) Անհրաժեշտ ե ջախջախել և դեն գցել մյուս նեխած թեորիան, վորն ասում ե, թե վնասարար իր թե չի կարող լինել նա, ու միշտ չի վնասում և ով թեկուղ յերբեմն հաջողություններ ե ցույց տալիս իր աշխատանքում։

Այդ տարօրինակ թեորիան մերկացնում ե նրա հեղինակների միամստությունը։ Վոչ մի վնասարար շարունակ չի վնասի, յեթե նա չի ուղղում ամենակարճ ժամանակամիջոցում մերկացված լինել։ Ընդհակառակը, իսկական վնասարարը սկսոք ե ժամանակ առ ժամանակ հաջողություններ ցույց տա իր աշխատանքում, վորովհետեւ այդ միակ միջոցն ե իրեն վորակեա վնասարար պահպանելու, վստահություն շահելու և իր վնասարարական աշխատանքը շարունակելու։

Յես կարծում եմ, վոր այս հարցը պարզ ե և հետագա բացատրությունների կարիք չունի։

9) Անհրաժեշտ ե ջախջախել և դեն գցել յերրորդ նեխած թեորիան, վորն ասում ե, թե տնտեսական պլանների սիստեմատիկ կատարումն իրեւ թե ի չիք ե դարձնում վնասարարությունը և վնասարարության հետևանքները։

Նմանորինակ թեորիան կարող ե հետապնդել միայն մի նպատակ՝ շոյել մեր աշխատողների գերատեսչական ինքնասիրությունը, հանդստացնել նրանց և թուլացնել նրանց ալայքարը վնասարարության դեմ։

Ի՞նչ ե նշանակում «մեր տնտեսական պլանների սիստեմատիկ կատարումը»։

Առաջին՝ ապացուցված ե, վոր մեր բոլոր տնտեսական պլանները ցածրացված են, վորովհետև նրանք հաշվի չեն առնում այն հսկայական ռեզերվներն ու հնարավորությունները, վոր թագնը ված են մեր ժողովրդական տնտեսության ընդերքում։

Եերկրորդ՝ տնտեսական պլանների միազումար կատարումն ըստ ժողկոմատների ամբողջությամբ վերցրած՝ դեռ չի նշանակում, վոր միքանի շատ կարեւոր ճյուղերում պլանները նույնպես կատարվում են։ Ընդհակառակը, փաստերն ասում են, վոր տարեկան տնտեսական պլանները կատարած և նույնիսկ գերա-

կատարած մի ամբողջ շարք ժողկոմատներ սիստեմատիկորեն չեն կատարում պլանները ժողովրդական տնտեսության միքանի շատ կարեւոր ճյուղերում։

Յերրորդ՝ կասկած չի կարող լինել, վոր յեթե վնասարարները մերկացված և դուրս գցված չլինելին, շատ ավելի վատ վիճակի մեջ կլիներ տնտեսական պլանների կատարման գործը, վորի մասին հարկ ե, վոր հիշելին քննարկվող թեորիայի կարձատենս հեղինակները։

Չորրորդ՝ վնասարարներն իրենց դլխավոր վնասարարական աշխատանքը սովորաբար հարմարեցնում են վոչ թե խաղաղ ժամանակված շրջաննին, այլ պատերազմի նախորյակի կամ հենց պատերազմի ժամանակաշրջաննին։ Յենթադրենք, վոր մենք սկսելինքորորել մեզ «տնտեսական պլանների սիստեմատիկ կատարման» նեխած թեորիայով և ձեռք չտայինք վնասարարներին։ Պատկերացնում են արդյոք այդ նեխած թեորիայի հեղինակները, թե ինչպիսի միթխարի մնաս կհացնելին վնասարարները մեր պետությանը պատերազմի ղեպքում, յեթե նրանց թողնելին մնալ մեր ժողովրդական տնտեսության ընդերքում՝ «տնտեսական պլանների սիստեմատիկ կատարման» նեխած թեորիայի հովանու տակ։

Մի՞թե պարզ չե, վոր «տնտեսական պլանների սիստեմատիկ կատարման» թեորիան վնասարարների համար ձեռնտու թեորիա յե։

10) Անհրաժեշտ ե ջախջախել և դեն գցել չորրորդ նեխած թեորիան, վորն ասում ե, թե ստախանովյան շարժումը վնասարարությունը վերացնելու իրեւ թե հիմնական միջոցն ե հանդիսանում։

Այդ թեորիան հնարվել ե նրա համար, վոր ստախանովյականների և ստախանովյան շարժման վերաբերյալ շաղակրամության աղմուկի տակ հարգածը հեռացվի վնասարարներից։

Ընկեր Մոլոտովն իր զեկուցման մեջ ցուցադրեց ամբողջ մի շարք փաստեր, վորոնք խոսում են այն մասին, թե ինչպես տրոցկիստական և վոչ-տրոցկիստական վնասարարները կուղասում ու Դոնբասում, ի չարը դործ դնելով քաղաքականապես անհոգ մեր ընկերների վասահությունը, սիստեմատիկորեն խարում եյին տախանովյականներին, քար եյին գցում նրանց անիվի տակ, արհետականորեն մի ամբողջ շարք իսոչբնոլուսներ եյին ստեղծում նրանց

Հաջող աշխատանքի դեմ և, վերջապես, հասան այն բանին, վոր քայլայեցին նրանց աշխատանքը: Ի՞նչ կարող են անել միմիայն առախանովականները, յեթե կապիտալ շինարարության վնասարարական կատարումը, ասենք՝ Դոնբասում, խղում առաջացրեց տեմպերից հետ մնացող ածխի հանույթի նախապատրաստական աշխատանքների և մյուս բոլոր աշխատանքների միջև: Մի՞թե պարզ չեն, վոր ստախանովյան շարժումն ինքը կարեք ունի մեր ռեալ ոգնությանը՝ ընդդեմ վնասարարների, բոլոր ու ամեն տեսակ մեքենայությունների, վորպեսդի առաջ մղի գործը և կատարի իր մեծ միսիան: Մի՞թե պարզ չեն, վոր պայքարը վնասարարության դեմ, պայքարը վնասարարության լիկվիդացիայի համար, վնասարարության սանձումն այն պայմանն է, վորն անհրաժեշտ է նրա համար, վորպեսդի ստախանովյան շարժումը կարողանածավարլել ամբողջ լայնությամբ:

Յետ կարծում եմ, վոր այդ հարցը նույնպես պարզ և և հետագա բացատրությունների կարեք չունի:

11) Անհրաժեշտ է ջախջախել և դեն գցել հինգերորդ նեխածթեորիան, վորն ասում ե, թե տրոցկիստական վնասարարներն իբր թե այլևս ոեզերի չունեն, թե նրանք իբր թե իրենց վերջին կադրերն են հավաքում:

Այդ ճիշտ չեն, ընկերներ: Այդպիսի թեորիա կարող ելին հնագել միմիայն միամիտ մարդեկ: Տրոցկիստական վնասարարներն ունեն իրենց ոեզերիները: Նրանք բարկացած են նախ և առաջ ԽՍՀՄ-ի ջախջախված շահագործող դասակարգերի մնացորդներից: Նրանք բարկացած են ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս գտնվող ամբողջ մի շարք խմբերից ու կաղմակերպություններից, վորոնք թշնամի յեն Խորհրդային Միությանը:

Վերցնենք, որինակ, տրոցկիստական հակահեղափոխական Մինտերնացիոնալը, վորը յերկու յերրորդով բաղկացած և լըրտեսներից ու դիվերսանտներից: Ինչո՞վ ոեզերի չե այդ: Մի՞թե պարզ չեն, վոր այդ լըրտեսական ինտերնացիոնալը կազմել ե տալու տրոցկիստների լըրտեսական-վնասարարական աշխատանքի համար:

Կամ վերցնենք, որինակ, որիկա Շեֆլոյի խումբը Նորվեգիայում, վոր իր մոտ ապաստան եր տվել ոբեր-լըրտես Տրոցկուն և նրան ոգնում եր վատություն անելու Խորհրդային Միությա-

նը: Այդ խումբն ինչո՞վ ոեզերի չե: Ո՞վ կարող ե ժիստել, վոր այդ հակահեղափոխական խումբն այսուհետեւ ել ծառայություններ և մատուցելու տրոցկիստական լըրտեսներին ու վնասարարներին:

Կամ վերցնենք, որինակ, Շեֆլոյի նման նույնական մի սրիկայի խումբ, Սովլարինի խումբը Ֆրանսիայում: Ինչո՞վ ոեզերի չե այն: Մի՞թե կարելի յե ժիստել, վոր սրիկաների այդ խումբը նույնական ոգնելու յե տրոցկիստներին՝ Խորհրդային Միության դեմ ուղղված նրանց լըրտեսական-վնասարար աշխատանքում:

Իսկ Գերմանիայում գտնվող այդ բոլոր պարոնները, ամեն տեսակ Ռուսա Ֆիշերները, Մասլովները, Ռուբրանները, վորոնք իրենց հոգին ու մարմինը վաճառել են Փաշիստներին, —ինչո՞վ ոեզերի չեն նրանք տրոցկիստական լըրտեսական-վնասարար աշխատանքի համար:

Կամ, որինակ, գրողների հայտնի հորդան Ամերիկայում՝ հայտնի ժուլիկ իստմենի գլխավորությամբ, գրչի այդ բոլոր աղականները, վորոնք ապրում են հենց նրանով, վոր դրաբարուում են ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգին, —նրանք ինչո՞վ ոեզերի չեն տրոցկիսմի համար:

Վո՞չ, պետք ե դեն գցել այն նեխածթեորիան, թե տրոցկիստներն իբր թե իրենց վերջին կադրերն են հավաքում:

12) Վերջապես, անհրաժեշտ է ջախջախել և դեն գցել մի նեխածթեորիան, վորն ասում ե, թե քանի վոր մենք, բոլշևիկներս, շատ ենք, իսկ վնասարարները քիչ են, քանի վոր մեղ, բոլշևիկներիս, պաշտպանում են տասնյակ միլիոնալոր մարդեկ, իսկ տրոցկիստ-վնասարարներին՝ միմիայն միավորներ ու տասնյակներ, ապա մենք, բոլշևիկներս, կարող ելինք ուշադրություն ել չղարձնել ինչ-վոր մի բուռ վնասարարների վրա:

Այդ ճիշտ չեն, ընկերներ: Այդ ավելի քան տարորինակ թեորիան հնարված ե միսիմարելու համար մեր միքանի զեկավար ընկերներին, վորոնք տապալվել են աշխատանքում վնասարարության դեմ պայքարել չկարողանալու պատճառով, և հնարված է քննեցնելու համար նրանց զգաստությունը, թողնելու, վոր նրանք հանդիսատ քննեն:

Վոր տրոցկիստական վնասարարներին աջակցում են միավորներ, իսկ բոլշևիկներին՝ տասնյակ միլիոնալոր մարդեկ — այդ,

իւարկե, ճիշտ ե: Բայց դրանից բնավ չի հետեւում, թե վնասարարները չեն կարող լրջագույն վնաս չհասցնել մեր գործին: Վատություն անելու և վնասելու համար ամենեմն մեծ թվով մարդ չի պահանջվում: Դնեպրոստրոյը կառուցելու համար հարկավոր ե գործի գնել տասնյակ հազարավոր բանվորներ: Իսկ այն պայմենելու համար պահանջվում ե գուցե միքանի տասնյակ մարդ, վոչ ավելի: Վորագեազի պատերազմի ժամանակ ճակատամարտը շահվի, դրա համար կարող ե պահանջվել կարմիր բանակայինների միքանի կորպուս: Իսկ վորագեազի այդ շահումը ճակատում ճախողվի, դրա համար բանական ե, վոր վորեւ տեղում՝ բանակի շտաբում կամ նույնիսկ դիմիդիայի շտաբում լինեն միքանի լրտես, վորոնք կարող են գողանալ ոպերատիվ պլանը և հանձնել հակառակորդին: Վորագեազի յերկաթուղային մեծ կամուրջ կառուցվի, դրա համար հազարավոր մարդիկ են պահանջվում: Բայց վորագեազի այն պայմենը, դրա համար բավական և ընդամենը միքանի հոգի: Կարելի յեր տասնյակ ու հարյուրավոր այսպիսի որինակներ բերել:

Հետեւաբար, չի կարելի իրեն միսիթարել նրանով, թե մենք շատ ենք, իսկ նրանք, տրոցկիստական վնասարարները, քիչ են:

Պետք ե հասնել այն բանին, վորագեազի նրանք, տրոցկիստական վնասարարները, բոլորովին չինեն մեր շարքերում:

Այդպես ե գործն այն հարցում, թե ինչպես պետք է լիկիդացիայի յենթարկել մեր աշխատանքի այն թերությունները, վորոնք ընդհանուր են մեր բոլոր՝ թե՛ տնտեսական ու խորհրդային և թե՛ վարչական ու կուսակցական կազմակերպությունների համար:

Սրանք են այն միջոցառումները, վորոնք անհրաժեշտ են այդ թերությունները վերացնելու համար:

Ինչ վերաբերում ե հատկապես կուսակցական կազմակերպություններին և նրանց աշխատանքի թերություններին, ապա այդ թերությունների վերացման միջոցների մասին բավականաչափ մանրամասնորեն խոսվում ե բանաձեկ՝ ձեր հայեցողությանը ներկայացվող նախագծում: Ուստի յես կարծում եմ, վոր այստեղ կարիք չկա ծանրանալու գործի այդ կողմի վրա:

Են կուզեյի միայն մի քանի խոսք ասել մեր կուսակցական

կադրերի քաղաքական պատրաստության ու կատարելագործման հարցի մասին:

Յես կարծում եմ, վոր յեթե մենք կարողանայինք, յեթե մենք ի վիճակի լինեյինք մեր կուսակցական կադրերը վարից-վեր նախապատրաստելու իդեոլոգիապես և կովելու քաղաքականորեն այնպես, վոր նրանք կարողանային աղատորեն կողմնորոշվել ներքին ու միջազգային իրադրության մեջ, յեթե մենք կարողանայինք դարձնել նրանց միանգամայն հասուն լենինյաններ, մարքսիստներ, ընդունակ առանց լուրջ սխալների լուծելու յերկիրը ղեկավարելու հարցերը, ապա դրանով մենք լուծած կինեյինք մեր բոլոր խնդիրների իննը տասերորդը:

Ի՞նչ վիճակի մեջ ե մեր կուսակցության ղեկավար կազմի հարցը:

Մեր կուսակցության կազմում, յեթե նկատի առնենք նրա ղեկավար խավերը, կան մոտ յերեք-չորս հազար բարձր ղեկավարներ: Դա—յես կասեյի—մեր կուսակցության դեներալիտետն ե:

Ապա գալիս են 30—40 հազար միջակ ղեկավարներ: Դա մեր կուսակցական սպայությունն ե:

Այնուհետև գալիս ե մոտ 100—150 հազար կուսակցական ստորին հրամանատարական կազմ: Դա մեր, այսպես ասած, կուսակցական յենթասպայությունն ե:

Բարձրացնել այդ հրամանատարական կադրերի իդեոլոգիական մակարդակը և քաղաքական կովվածությունը, լցնել այդ կադրերի մեջ թարմ ուժեր, վորոնք սպասում են իրենց առաջ-քաշմանը և այդպիսով ընդարձակել ղեկավար կադրերի կազմը, ահա ինդիրը:

Ի՞նչ ե պահանջվում դրա համար:

Նախ և առաջ անհրաժեշտ ե առաջարկել մեր կուսակցական ղեկավարներին—բջիջների քարտուղարներից մինչև մարզային ու հանրապետական կուսակցական կազմակերպությունների քարտուղարները—իրենց համար ընտրել վորոշ ժամանակամիջոցում յերկուական մարդ, յերկուական այնպիսի կուսակցական աշխատող, վորոնք ընդունակ են նրանց իսկական տեղակալները լինելու: Կարող են ասել. իսկ վո՞րտեղից գտնենք դրանց, յուրաքանչյուրի համար յերկու տեղակալ, մենք չունենք այդպիսի մարդիկ, չունենք համապատասխան աշխատողներ: Այդ ճիշտ չե՛, ըն-

կերնե՛ր : Բնդունակ մարդիկ , տաղանդավոր մարդիկ մենք ունենք տասնյակ հազարներով : Հարկավոր ե միայն ճանաչել նրանց և ժամանակին առաջբաշել , վորպեսդի նրանք չճանան հին տեղում և չսկսեն նեխել : Վորոնեցեք և կդտնեք :

Այնուհետև : Բջիջների քարտուղարների կուսակցական ուսուցման ու վերապատրաստման համար անհրաժեշտ ե յուրաքանչյուր մարզային կենտրոնում ստեղծել քառամսյա «կուսակցական դասընթացներ» : Այդ դասընթացները պետք ե ուղարկել բոլոր սկզբնական կուսակցական կազմակերպությունների (բջիջների) քարտուղարներին , իսկ այնուհետև , յերբ նրանք կանցնեն դասընթացը և կվերադառնան տեղերը , ուղարկել նրանց տեղակալներին և սկզբնական կուս-կազմակերպությունների ամենաընդունակ անդամներին :

Այնուհետև : Շրջանային կազմակերպությունների առաջին քարտուղարների քաղաքական վերապատրաստման համար անհրաժեշտ ե ԽՍՀՄ-ում , ասենք , տասն ամենից ավելի կարևոր կետերում , ստեղծել ութամսյա «Լենինյան դասընթացներ» : Այդ դասընթացները պետք ե ուղարկել շրջանային և ոլոպուղային կուսակցական կազմակերպությունների առաջին քարտուղարներին , իսկ այնուհետև , յերբ նրանք կանցնեն դասընթացը և կվերադառնան տեղերը , ուղարկել նրանց տեղակալներին և շրջանային ու ոլոպուղային կազմակերպությունների ամենաընդունակ անդամներին :

Այնուհետև : Քաղաքային կազմակերպությունների քարտուղարների իդեոլոգիական վերապատրաստման ու քաղաքական կատարելագործման համար անհրաժեշտ ե ՀամԿ(ր)կ Կենտկոմին կից կազմակերպել վեցամսյա «կուսակցության պատմության ու քաղաքականության դասընթացներ» : Այդ դասընթացները պետք ե ուղարկել քաղաքային կազմակերպությունների առաջին կամ յերկրորդ քարտուղարներին , իսկ այնուհետև , յերբ նրանք կանցնեն դասընթացը և կվերադառնան տեղերը , ուղարկել քաղաքային կազմակերպությունների ամենաընդունակ անդամներին :

Վերջապես , անհրաժեշտ ե ՀամԿ(ր)կ Կենտկոմին կից ստեղծել վեցամսյա «Խորիրդակցություն» ներքին ու միջազգային քաղաքականության հարցերի վերաբերյալ» : Այսուղ պետք ե ուղարկել մարզային ու յերկրային կազմակերպությունների և աղդամային կոմունիստական կուսակցությունների կենտրոնական կոմի-

տեների առաջին քարտուղարներին : Այդ ընկերները պետք ե տան վոչ թե մեկ , այլ մի քանի հերթափոխ , վորոնք կարողանան վուխարիներ մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի ղեկավարներին : Այդ անհրաժեշտ ե , և այդ պետք ե կատարվի :

Յես վերջացնում եմ , ընկերների :

Մենք այսպիսով շարադրեցինք մեր աշխատանքի հիմնական թերությունները , ինչպես այն թերությունները , վորոնք ընդհանուր են մեր բոլոր կազմակերպությունների համար , —տնտեսական , վարչական , կուսակցական , —այնպես ել այն թերությունները , վորոնք հատուկ են հատկապես միայն կուսակցական կազմակերպություններին , —թերությունները , վորոնք բանվոր դասակարգի թշնամիներն ոգտագործում են իրենց գիվերսիոն-վնասարարական և լրտեսական-տեռորիստական աշխատանքի համար :

Մենք այնուհետև նշեցինք այն հիմնական միջոցառումները , վորոնք անհրաժեշտ են նրա համար , վորպեսզի վերացնենք այդ թերությունները և անխառ դարձնենք ոտարերկրյա հետախուզական որդանների տրոցկիստական-Փաշիստական դործակալների գիվերսիոն-վնասարարական և լրտեսական-տեռորիստական վոտնագությունները :

Հարց ե ծագում , թե մենք կարո՞ղ ենք արդյոք իրադրել այս բոլոր միջոցառումները , ունենք մենք արդյոք դրա համար բոլոր անհրաժեշտ հնարավորությունները :

Անկասկած , կարող ենք : Կարող ենք , վորովհետև մենք մեր տրամադրության տակ ունենք այն բոլոր միջոցները , վորոնք անհրաժեշտ են այդ միջոցառումներն իրադրելու համար :

Իսկ ի՞նչ ե պակասում մեղ :

Պակասում ե միայն մեկ բան . պատրաստակամություն վիկիդացիայի յենթարկելու մեր սեփական անհոգությունը , մեր սեփական բարեհոգությունը , մեր սեփական քաղաքական կարգա-տեսությունը :

Այս ե խնդրի առանցքը :

Բայց մի՞թե մենք չենք կարողանա պատվել այդ ծիծաղելի իդիոտային հիվանդությունից , մենք , վոր տապալել ենք կապիտալիզմը , հիմնականում կառուցել ենք սոցիալիզմ և բարձրացրել ենք համաշխարհային կոմունիզմի մեջ դրույթ :

Մենք հիմք չունենք կասկածելու , վոր անտարակույս կաղա-

վենք դրանից, յեթե, իհարկե, ցանկանանք այդ: Կազմատվենք
Վոչ թե հենց այնպես, այլ բոլշևիկորեն, ինչպես հարկն ե:

Յեկ յերբ մենք ազատվենք այդ իդիոտային հիվանդությունից, մենք կարող ենք լիակատար վստահությամբ ասել, վոր մեզ
Համար սարսափելի չե վոչ մի թշնամի, վո՛չ ներքին, վո՛չ ար-
տաքին, մեղ համար սարսափելի չեն նրանց վոտնձգությունները,
վորովհետեւ մենք ապագայում նրանց կջախջախենք նույնպես,
ինչպես ջախջախում ենք նրանց այժմ, ինչպես նրանց ջախջախել
ենք անցյալում: (Ծափահարություններ):

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Ընկերնե՛ր:

Յես իմ զեկուցման մեջ խոսեցի քննարկվող գործի հիմնական
հարցերի մասին: Մտքերի փոխանակությունը ցույց տվեց, վոր
մեզ մոտ այժմ կա լիակատար պարզություն, կա խնդիրների
ըմբռնում և կա մեր աշխատանքի թերությունները վերացնելու
պատրաստակամություն: Բայց մտքերի փոխանակությունը ցույց
տվեց նաև, վոր կան մեր կազմակերպական-քաղաքական պրակ-
տիկայի վորո՛չ կոնկրետ հարցեր, վորոնց վերաբերյալ մեղ մոտ
դեռ կտարելապես պարզ հասկացողություն չկա: Յես հաշվեցի
այդպիսի 7 հարց:

Թույլ տվեք մի քանի խոսք ասել այդ հարցերի մասին:

1) Այժմ, պետք ե յենթադրել, բոլորը հասկացան, գիտակցե-
ցին, վոր տնտեսական կամպանիաներով ու տնտեսական հաջողու-
թյուններով չափից գուրս տարվելը՝ կուսակցական-քաղաքական
հարցերը թերագնահատելու և մոռացության տալու պայմաննե-
րում—դեպի փակուլի յե տանում: Հետեաբար, անհրաժեշտ ե
աշխատողների ուշադրությունը Մըել կուսակցական-քաղաքական
հարցերի կողմը՝ այնպես, վոր տնտեսական հաջողությունները
զուգակցվեն և կողք-կողքի ընթանան կուսակցական-քաղաքական
աշխատանքի հաջողությունների հետ:

Գործնականորեն ինչպե՞ս իրականացնել կուսակցական-քաղա-
քական աշխատանքն ուժենացնելու խնդիրը, կուսակցական կազ-
մակերպությունները տնտեսական մանրունքներից ազատելու խըն-
դիրը: Ինչպես յերեսում ե մտքերի փոխանակությունից, վօրոշ
ընկերներ հակումն ունեն այն սխալ հետեւությունն անելու գրա-
նից, վոր այժմ իրը թե անհրաժեշտ կլինի բոլորովին հեռանալ
տնտեսական աշխատանքից: Համենայն դեպս ձայներ յեղան—զե,
այժմ, փառք ասածու, կազմատվենք տնտեսական գործերից, այժմ
կտրելի յե կուսակցական-քաղաքական աշխատանքով ել զբաղվել:

Ճե՞շտ և արդյոք այդ հետևությունը։ Վո՛չ, ճիշտ չե։ Յերբ մեր կուսակցական ընկերները, տարվելով տնտեսական հաջողություններով, հեռանում եյին քաղաքականությունից, այդ ծայրահեղություն եր, վորը մեծ զոհեր պատճառեց մեզ։ Յեթե այժմ մեր վորը ընկերներ, ձեռնամուխ լինելով կուսակցական-քաղաքական աշխատանքի ուժեղացմանը, մտքով անցկանցնեն հեռանալ տընտեսությունից, ապա այդ կիմի մյուս ծայրահեղությունը, վորը մեզանից կիմի վոչ պակաս զոհեր։ Զի կարելի մեկ ծայրահեղությունից նետվել դեպի մյուսը։ Զի կարելի քաղաքականությունն անջատել տնտեսությունից։ Մենք չենք կարող հեռանալ տնտեսությունից նույնպես, ինչպես չենք կարող հեռանալ քաղաքականությունից։ Ուսումնասիրության հարմարության համար մարդիկ սովորաբար մեթոդոլոգիորեն անջատում են տնտեսության հարցերը քաղաքականության հարցերից։ Բայց այդ կատարվում ե միայն մեթոդոլոգիորեն, արհեստականորեն, միայն ուսումնասիրության հարմարության համար։ Կյանքում, ընդհակառակը, պրակտիկայում քաղաքականությունն ու տնտեսությունն անբաժանելի յեն։ Նրանք դոյլություն ունեն միատեղ և դործում են միատեղ։ Յեվ նա, ով մտածում է մեր սլրակտիկ քաղաքականության մեջ տնտեսությունն անջատել քաղաքականությունից, տնտեսական աշխատանքն ուժեղացնել քաղաքական աշխատանքը նվազեցնելու գնով, կամ ընդհակառակը, քաղաքական աշխատանքն ուժեղացնել տնտեսական աշխատանքի նվազեցման գնով, —նա անպայման ընկնում ե փակուղու մեջ։

Բանաձեկի նախագծի՝ կուսակցական կազմակերպությունները տնտեսական մանրունքներից ազտելու և կուսակցական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու վերաբերյալ հայտնի կետի իմաստն այն չե, վոր հեռանանք տնտեսական աշխատանքից ու տնտեսական զեկավարությունից, այլ սոսկ միայն այն, վոր այլևս թույլ չտանք տնտեսական որդանները, այդ թվում և հատկապես հողային որդանները, մեր կուսակցական կազմակերպություններով փոխարինելու և դիմալրիելու պրակտիկան։ Հետևաբար, անհրաժեշտ ե յուրացնել տնտեսական որդանների բոլշեիկյան զեկավարման մեթոդը, վորի եյությունն այն ե, վոր սիստեմատիկաբար ուժնենք այդ որդաններին, սիստեմատիկաբար ամրացնենք նրանց և տնտեսությունը զեկավարենք վոչ թե այդ որդաններից նրանց և տնտեսությունը զեկավարենք վոչ թե այդ որդաններից։ Հարկավոր ե տնտեսական որդաններին:

Ներին ու նախ և առաջ հողային որդաններին լավագույն մարդիկ տալ, հարկավոր ե այդ որդանները կոմպլեկտավորել նոր լավագույնն աշխատողներով, վորոնք ընդունակ լինեն կատարելու իրենց վրա դրված խնդիրները։ Միայն այն բանից հետո, յերբ կկատարվի այդ աշխատանքը, կարելի յե հույս ունենալ, վոր կուսակցական կազմակերպությունները լիովին կազմադրվեն տնտեսական մանրունքներից։ Հասկանալի յե, վոր այդ դործը լուրջ ե վորոշ ժամանակ ե պահանջում։ Բայց քանի դեռ այդ չի կատարված, կուսակցական կազմակերպությունները հարկադրված կլինեն առաջիկայում ևս վորոշ կարծ ժամանակամիջոցում ընդհանուր զբաղվել դյուզատնտեսական դործերով՝ դրանց բոլոր մանրունքներով—վար, ցանք, բերքահավաք և այլն։

2) Յերկու խոսք վնասարարների, դիվերսանտների, լրտեսների և այլոց մասին։ Հիմա, յես կարծում եմ, բոլորի համար պարզ ե, վոր այժմյան վնասարարներն ու դիվերսանտները, ինչպիսի դրոշակով ել թեկուզ դիմակավորվեն նրանք, արոցկիստական թերուրիխարինյան, վաղուց արդեն դադարել են բանվորական շարժման մեջ քաղաքական հոսանք լինելուց, վոր նրանք վեր են ածվել պրոֆեսիոնալ վնասարարների, դիվերսանտների, լրտեսների, մարդասպանների անսկզբունք ու գաղափարազուրկ մի բանդայի։ Հասկանալի յե, վոր անհրաժեշտ կիմի անողոքաբար ջախճախին ու արմատախիլ անել այդ պարոններին վորպես բանվոր դասակարգի թշնամիների, վորպես մեր հայրենիքի գավաճանների։ Այդպարզ ե և հետազոտ պարզաբանումներ չի պահանջում։

Բայց ահա մի հարց գործնականորեն ի՞նչպիս իրականացնել արոցկիզմի ճապոն-գերմանական գործակալներին ջախճախելու և արմատախիլ անելու խնդիրը։ Այդ նշանակո՞ւմ ե արդյոք, վոր պետք ե ջախճախել ու արմատախիլ անել վո՛չ միայն իսկական արոցկիստներին, այլև նրանց, վորոնք մի ժամանակ տատանվել են արոցկիզմի կողմը, իսկ այնուհետև, վաղուց արդեն, հեռացել են արոցկիզմից, վո՛չ միայն նրանց, վորոնք իսկապես վնասարաբության արոցկիստական գործակալներ են հանդիսանում, այլև նրանց, վորոնք մի ժամանակ անցել ե այս կամ այն արոցկիստուր։ Համենայն դեպս այդպիսի ձայներ այստեղ պլենումում լըսվեցին։ Կարելի՞ յե արդյոք բանաձեկի նման մեկնաբանումը ճիշտ համարել։ Վո՛չ, չի կարելի ճիշտ համարել։ Այդ հարցում, ինչ-

պես և մյուս բոլոր հարցերում, անհրաժեշտ ե անհատական, չերտավորված մոտեցում։ Զի կարելի բոլորին մի սանրաշափով խուզել։ Այդպիսի հախուռն մոտեցումը կարող ե միայն վնասնել խմական տրոցկիստական վնասարարների ու լրտեսների դեմ պայքարելու գործին։

Մեր պատասխանատու ընկերների մեջ կան վորոշ թվով նախկին տրոցկիստներ, վորոնք վաղուց արդեն հեռացել են տրոցկիզմից և տրոցկիզմի դեմ պայքար են մղում վո՛չ թե ավելի վատ, այլ ավելի լավ, քան մեր հարդելի ընկերներից վոմանք, վորոնք առիթ չեն ունեցել տրոցկիզմի կողմը տատանվելու։ Հիմարություն կլիներ այժմ արատավորել այդպիսի ընկերներին։

Մեր ընկերների մեջ կան նաև այնպիսիները, վորոնք գաղափարապես միշտ կանգնած են յեղել տրոցկիզմի դեմ, բայց չնայած դրան, անձնական կազ են պահպանել առանձին տրոցկիստների հետ, վորը նրանք չեն հասլաղել վերացնել, հենց վոր նրանց համար պարզ է դարձել տրոցկիզմի գործնական ֆիզիոնոմիան։ Լավ չե, իհարկե, վոր նրանք առանձին տրոցկիստների հետ ունեցած իրենց անձնական բարեկամական կապը կտրեցին վո՛չ թե միանդամից, այլ ուշացումով։ Բայց հիմարություն կլիներ այդպիսի ընկերներին տրոցկիստների հետ միասին մեկ կույտի մեջ նետել։

3) Ի՞նչ ե նշանակում ճիշտ ընտրել աշխատողներին և նրանց ճիշտ դասավորել աշխատանքի մեջ։

Այդ նշանակում ե աշխատողներին ընտրել նախ՝ քաղաքական հատկանիշով, այսինքն՝ նրանք արժանի⁹ յեն արդյոք քաղաքական վստահության, և յերկրորդ՝ գործնական հատկանիշով, այսինքն՝ նրանք պիտանի⁹ յեն արդյոք այսինչ կոնկրետ աշխատանքի համար։

Այդ նշանակում ե՝ գործարարական մոտեցումը չվերածել դործամոլական մոտեցման, յերբ մարդիկ հետաքրքրվում են աշխատողների գործարար հատկություններով, բայց չեն հետաքրքրվում նրանց քաղաքական ֆիզիոնոմիայով։

Այդ նշանակում ե՝ քաղաքական մոտեցումը չվերածել միակու մոտեցման, յերբ մարդիկ հետաքրքրվում են աշխատողների քաղաքական ֆիզիոնոմիայով, բայց չեն հետաքրքրվում նրանց գործարարական հատկություններով։

Կարելի⁹ յե արդյոք ասել, վոր բոլցներիցան այս կանոնը կա-

տարվում ե մեր կուսակցական ընկերների կողմից։ Դժբախտաբար, այդ չի կարելի ասել։ Այստեղ պլենում արդեն խոսեցին այդ մասին։ Բայց ամեն ինչ չասացին։ Բանն այն է, վոր այդ փորձված կանոնը մեր պրակտիկայում ամեն քայլափոխում խախտվում ե և այն ել ամենակոպիտ ձեռվ։ Ամենից ավելի հաճախ աշխատողներին ընտրում են վոչ թե ըստ որյեկտիվ հատկանիշների, այլ ըստ պատահական, սուբյեկտիվ, մեշչանական-քաղաքենիական հատկանիշների։ Ամենից ավելի հաճախ ընտրում են այսպես կոչված ծանոթներին, բարեկամներին, հայրենակիցներին, անձնապես նվիրված մարդկանց, իրենց՝ շեֆերին դովարանելու մեջ վարպետներին—անկախ նրանց քաղաքական ու գործարարական պիտանիությունից։

Հասկանալի յե, վոր պատասխանատու աշխատողների դեկավար խմբի փոխարին ստացվում ե մտերիմ մարդկանց մի փոքրիկ ընտանիք, մի արտել, վորի անդամներն աշխատում են ապրել խաղաղ, չվիրավորել միմյանց, աղքը գուրս չհանել բակից, գովվարանել միմյանց և ժամանակ առ ժամանակ փուչ ու դատարկ և սիրտ խառնող ուապրտներ ուղարկել կենարոն հաջողությունների մասին։

Դժվար չե հասկանալ, վոր այդպիսի ընտանեկան իրադրության մեջ չի կարող տեղ լինել վո՛չ աշխատանքի թերությունների քննադատության համար, վո՛չ աշխատանքի դեկավարների ինքնաքննադատության համար։

Հասկանալի յե, վոր այդպիսի ընտանեկան իրադրությունը բարենպատ միջավայրը ե ստեղծում ստորագրչներ աճեցնելու համար, մարդիկ, վորոնք զուրկ են իրենց արժանապատվության զգացումից և այդ պատճառով վոչ մի ընդհանուր բան չօւնեն բոլցների հետ։

Վերցնենք, որինակ, ընկերներ Միջոցյանին և Վայնավին։ Դրանցից առաջնը Ղաղախստանի յերկրային կուսակցական կազմակերպության քարտուղարն ե, յերկրորդը՝ Յարուղավոր մարդիկ յին կուսակցական կազմակերպության քարտուղարը։ Այդ մարդիկ մեր շրջանում հետին աշխատողներ չեն։ Իսկ ինչպես են նրանք ընտրում աշխատողներին։ Առաջինը Աղբբեջանից և Ուրալից, վորտեղ նա աշխատում եր առաջ, իր հետ Ղաղախստան և քաշովել 30—40 հոգի «իր մարդկանց և պատասխանատու պատերի գորեկ նրանց Ղաղախստանում։ Յերկրորդը՝ Դոնքասից, վոր յե դրեկ նրանց Ղաղախստանում։ Յերկրորդը՝ Դոնքասից, վոր

տեղ նա առաջ աշխատում եր , իր հետ Յարոսլավլ է քաշ տվել տասնյակից ավելի նույնպես «իր» մարդկանց և նրանց գրել և նույնպես պատասխանատու պոստերում : Հետեւաբար , ընկեր Միրզոյանն ունի իր արտելը : Իր արտելն ունի նաև ընկեր Վայնովը : Մի՞թե չեր կարելի աշխատողներ ընտրել տեղական մարդկանցից , ղեկավարվելով մարդկանց ընտրության և դասվորման բոլցեկայան հայտնի կանոնով : Իհարկե , կարելի յեր : Իսկ ինչու նրանք չարին այդ : Վորովհետեւ նրանք խախտում են աշխատողների ընտրության բոլցեկայան կանոնը , վորը բացառում և մեջանական-քաղքենիական մոտեցման հնարավորությունը , բացառում և աշխատողներին ընտանեկանության ու արտելայնության հատկանիշներով ընտրելու հնարավորությունը : Բացի դրանից , վորպես աշխատողներ ընտրելով անձնապես նվիրված մարդկանց , այդ ընկերներն , ըստ յերեսութին , ցանկանում ելին իրենց համար ստեղծել վորու անկախության իրադրություն ինչպես տեղական մարդկանց վերաբերմամբ , այսպես և կուսակցության կենտրոնի վերաբերմամբ : Յենթագրենք , վոր ընկերներ Միրզոյանը և Վայնովը այս կամ այն հանդամանքների չնորհիվ իրենց այժմյան աշխատանքի վայրից փոխադրվեն վորեւ այլ տեղ : Ի՞նչպես պետք և նրանք վարվեն այդ դեպքում իրենց «պոչերի» նկատմամբ : Միթե՞ նրանք պետք ե ստիպված լինեն այդ «պոչերը» նորից քաշ տալ իրենց աշխատանքի նոր վայրերը :

Ահա թե ինչպիսի արսուրդի յե հասցնում աշխատողների ճիշտ ընտրության ու դասավորման բոլցեկայան կանոնի խախտումը :

4) Ի՞նչ ե նշանակում ստուգել աշխատողներին , ստուգել առաջադրանքի կատարումը :

Ստուգել աշխատողներին , այդ նշանակում և ստուգել նրանց վոչ թե նրանց խստառմերով ու ղեկավացիաներով , այլ նրանց աշխատանքի արդյունքներով :

Ստուգել առաջադրանքների կատարումը , այդ նշանակում և ստուգել դրանք վո՛չ միայն դրասենյակում և վո՛չ միայն ճեական հաշվետվություններով , այլ նախ և առաջ դրանք ստուգել աշխատանքի վայրում կատարման փաստական արդյունքներով :

Հարկավո՞ր ե արդյոք առհասարակ այդպիսի ստուգում : Անպայման , հարկավոր ե : Հարկավոր ե , նախ՝ այն պատճառով , վոր միայն այդպիսի ստուգումն է հնարավորություն տալիս ճա-

նաշելու աշխատողին , վորոշելու նրա իսկական հատկությունները : Հարկավոր ե , յերկրորդ՝ այն պատճառով , վոր միայն այդպիսի ստուգումն է հնարավորություն տալիս վորոշելու գործադիր ապարատի արժանիքներն ու թերությունները : Հարկավոր ե , յերրորդ՝ այն պատճառով , վոր միայն այդպիսի ստուգումն է հնարավորություն տալիս վորոշելու հենց առաջադրանքների արժանիքներն ու թերությունները :

Վորու ընկերներ կարծում են , թե մարդկանց ստուգել կարելի յե միայն վերևից , յերբ ղեկավարներն իրենց ղեկավարած մարդկանց ստուգում են նրանց աշխատանքի արդյունքներով : Այդ ճիշտ չե : Ստուգումը՝ վերևից , իհարկե , հարկավոր ե , վորպիս մարդկանց ստուգելու և առաջադրանքների կատարումն ստուգելու իրական միջոցներից մեկը : Բայց վերևից ստուգելը դեռ բնակի չի սպառում ստուգման ամբողջ գործը : Գոյություն ունի նաև մի այլ տեսակի ստուգում , ստուգում՝ ներքեցից , յերբ մասսաները , յերբ ղեկավարվողներն ստուգում են ղեկավարներին , նշում են նրանց սխալները և մատնանշում են այդ սխալներն ուղղելու ճանապարհները : Այդ տեսակ ստուգումը մարդկանց ստուգելու ամենախելական յեղանակներից մեկն ե :

Կուսակցական մասսաներն իրենց ղեկավարներին ստուգում են ակտիվի ժողովներում , կոնֆերենցիաներում , համագումարներում , նրանց հաշվետվությունները լսելու միջոցով , թերությունները քննադատելու միջոցով , վերջապես այս կամ այն ղեկավարը ընկերներին ղեկավար որդանների մեջ ընտրելու կամ չընտրելու միջոցով : Դեմոկրատական ցենտրալիզմի ճշգրիտ կիրառումը կուսակցության մեջ , ինչպես այդ պահանջում ե մեր կուսակցության հանոնադրությունը , կուսակցական որդանների անպայման ընտրականությունը , թեկնածուներ առաջադրելու և թեկնածության դեմ առարկելու իրավունքը , փակ վկերպիւթյունը , քննադատության ու ինքնաքննադատության ազատությունը , այս դրանց նման միջոցառումներն անհրաժեշտ ե կենսագործելի միջի այլոց նրա համար , վորպեսզի հեշտացվի կուսակցության ղեկավարների ստուգումն ու վերահսկողությունը կուսակցական մասսաների կողմից :

Անկուսակցական մասսաներն իրենց տնտեսավարներին , պրոֆմիութենական ու այլ ղեկավարներին ստուգում են անկուսակցությամբ ակտիվներում , ամեն տեսակի մասսայական խորհրդական մասսաների կողմից :

դակցություններում, վորտեղ նրանք լսում են իրենց զեկավարների հաշվետվությունները, քննադատում են թերությունները և նշում են այդ թերություններն ուղղելու ճանապարհները:

Վերջապես, ժողովուրդը յերկրի զեկավարներին ստուգում ե Խորհրդային Միության իշխանության որդանների ընտրությունների ժամանակ ընդհանուր, հավասար, ուղղակի և դադանի քվեարկության միջոցով:

Խնդիրն այն է, վորպեսդի վերեկից ստուգելը միացվէ ներքեւից յեկող ստուգման հետ:

5) Ի՞նչ ե նշանակում կադրերին սովորեցնել նրանց սեփական սխալների վրա:

Լենինը սովորեցնում եր, վոր կուսակցության սխալների բարեխիզծ բացահայտումը, այդ սխալներն առաջացնող պատճառների ուսումնասիրությունը և այդ սխալներն ուղղելու անհրաժեշտ ճանապարհների նշումը կուսակցական կադրերի ճիշտ ուսուցման ու դաստիարակման, բանվոր դասակարդի և աշխատավոր մասսաների ճիշտ ուսուցման ու դաստիարակման ամենաուղիղ միջոցներից մեկն ե հանդիսանում: Լենինն ասում է.

«Քաղաքական կուսակցության վերաբերմունքը գեպի իր սխալները կուսակցության լրջության և իր դասակարդի նկատմամբ ու աշխատավոր մասսաների նկատմամբ իր ունեցած պարտականությունները գործնականում կատարելու կարևորագույն ու ամենաճիշտ չափանիշներից մեկն ե: Բացահայտորեն խոստովանել սխալը, բացահայտել նրա պատճառները, վերլուծել այդ սխալը ծնող իրադրությունը, ուշադիր քննարկել սխալն ուղղելու միջոցները, —ահա այս ելուրջ կուսակցության հատկանիշը, ահա այս ե կուսակցության կողմից իր պարտականությունների կատարումը, ահա այս ե դասակարդի, իսկ ապա նաև մասսայի դաստիարակումն ու ուսուցումը»:

Այդ նշանակում է, վոր բոլշևիկների պարտականությունն ե հանդիսանում վոչ թե իրենց սխալների սվաղումը, վոչ թե իրենց սխալների վերաբերյալ հարցից խոսափելը, ինչպես այդ լինում ե մեզ մոտ հաճախ, այլ իր սխալների ազնիվ ու բացահայտ խոստովանությունը, այդ սխալներն ուղղելու ճանապարհներն ազնվորեն ու բացահայտորեն նշելը, իր սխալներն ազնվորեն ու բացահայտորեն ուղղելով:

Յետ չեյի ասի, վոր շատերը մեր ընկերներից հաճույքով դիմեցին այդ գործին: Բայց բոլշևիկները, յեթե նրանք իսկապես ցանկանում են բոլշևիկներ լինել, պետք ե իրենց մեջ արիություն գտնեն բացի ի բաց խոստովանելու իրենց սխալները, բացահայտելու դրանց պատճառները, նշելու այդ սխալներն ուղղելու ճանապարհները և դրանով ողնելու կուսակցությանը՝ կադրերին ճիշտ ուսուցում և քաղաքական ճիշտ դաստիարակություն տալու: Վորովչետև միայն այս ուղղու վրա, միայն բացահայտ ու աղնիվ ինքնաքննադատության իրադրության մեջ կարելի յե դաստիարակել իսկապես բոլշևիկյան կադրեր, կարելի յե դաստիարակել իսկական բոլշևիկյան լիդերներ:

Յերկու որինակ, վորոնք ցուցադրում են լենինի դրույթի ճշտությունը:

Վերցնենք, որինակ, մեր սխալները կոլտնտեսային շինարարության ասապարեղում: Դուք պետք ե վոր հիշեք 1930 թվականը, յերբ մեր կուսակցական ընկերները մտածում եյին գյուղացիությանը կոլտնտեսային շինարարության փոխադրելու ամենաբարդ հարցը լուծել ինչ-վոր մի 3—4 ամսվա ընթացքում, և յերբ կուսակցության կենարոնական կոմիտեն հարկադրված յեղավագել տարվող-վողերվող ընկերներին: Այդ ամենավտանգավոր ժամանակաշրջաններից մեկն եր մեր կուսակցական ընկերները մոռագել եյին կոլտնտեսային շինարարության կամավորության մասին, մոռացել եյին, վոր չի կարելի գյուղացիներին կոլտնտեսային ուղին փոխադրել վարչարարական ճնշման միջոցով, մոռացել եյին, վոր կոլտնտեսային շինարարությունը պահանջում ե վոչ մի քանի ամսվա, այլ մի քանի տարվա մանրազնին ու մտածթե աշխատանք: Նրանք մոռացել եյին այդ մասին և չեյին ուղում ընդունել իրենց սխալները: Դուք պետք ե հիշեք, վոր կենտրոնի ցուցումը հաջողությունների հետևանքով առաջացած գլխավորույթի մասին և այն մասին, վոր մեր տեղերի ընկերներն առաջ պտույտի մասին և այն մասին և այն մասին գլանավեն, անտես առնելով ուեալ իրադրությունը, —սվիններով գիմավորվեց: Բայց դա կենտրոնի հետ չպահեց այն բանից, վոր նա հոսանքի դեմ գնար և մեր կուսակցական ընկերներին ըրջեր ճիշտ ուղղու վրա: Յեկ ի՞նչ: Այժմ բոլորի համար պարզ ե, վոր կուսակցությունը հասավ իր նպատակին, մեր կուսակցական ընկերներին շուռ տալով ճիշտ ուղղու վրա: Այժմ մենք կոլտնտեսային

շինարարության և կոլտնտեսային ղեկավարության ասպարեզում ունենք դյուլացիների միջից յելած տասնյակ հազարավոր հիանալի կադրեր: Այդ կադրերն աճել ու դաստիարակվել են 1930 թվականի սխալների վրա: Բայց մենք այժմ չեյինք ունենա այդ կադրերը, յեթե կուսակցությունն այն ժամանակ չգիտակցեր իր սխալները և ժամանակին չուղղեր դրանք:

Մի այլ որինակ, արդեն արդյունաբերական շինարարության բնագավառից: Յես նկատի ունեմ մեր սխալները Շախտի վնասարարության ժամանակաշրջանում: Մեր սխալներն այն եյին, վոր մենք հաշվի չեյինք առել արդյունաբերության ասպարեզում մեր կադրերի տեխնիկական հետամնացության ամբողջ վտանգավորությունը, մենք հաշտվում եյինք այդ հետամնացության հետ և մտածում եյինք սոցիալիստական արդյունաբերական լայն շինարարությունը ծավալել թշնամաբար տրամադրված մասնագետների ոգնությամբ, մեր տնտեսական կադրերին դատապարտելով բուրժուական մասնագետներին կից վատ կոմիսարների գերին: Դուք պետք եք վոր հիշեք, թե մեր տնտեսական կադրերն այն ժամանակ ինչպիսի դժկամությամբ եյին խոստովանում իրենց սխալները, ինչպիսի դժկամությամբ եյին խոստովանում նրանք իրենց տեխնիկական հետամնացությունը և ինչ աստիճան դժվար եյին յուրացնում նրանք «տեխնիկային տիրապետելու» լոգունդը: Յեկ ի՞նչ: Փաստերը ցույց են տալիս, վոր «տեխնիկային տիրապետելու» լոգունդն ունեցավ իր ներդործությունը և տվեց իր հաջող արդյունքները: Այժմ մենք ունենք տասնյակ ու հարյուր հազարավոր բոլշևիկյան հիանալի տնտեսական կադրեր, վորոնք արդեն տիրապետել են տեխնիկային և առաջ են մզում մեր արդյունաբերությունը: Բայց այդ կադրերը մենք այժմ չեյինք ունենա, յեթե կուսակցությունը տեղի տար տնտեսավարների համառության առջև, վորոնք չեյին ցանկանում խոստովանել իրենց տեխնիկական հետամնացությունը, յեթե կուսակցությունը չկիտակցեր այն ժամանակ իր սխալները և չուղղեր նրանք ժամանակին:

Մի քանի ընկերներ ասում են, թե նպատակահարմար չե բացահայտորեն խոսել իրենց սխալների մասին, վորովհետեւ սեփական սխալների բացահայտ խոստովանությունը կարող եք մեր թշնամիների կողմից գնահատվել վորպես մեր թուլությունը և կատարելու մեջից մասին ապահովագործությունը: Դրանք գատարել բաներ են, բոլոր ապահովագործությունը կադրերի վրա չափազանակ է:

ընկերներ, կատարյալ դատարկ բաներ: Մեր սխալների բացահայտ խոստովանությունը և այդ սխալներն աղնվորեն ուղղելն, ընդհակառակը, կարող եք միայն ուժեղացնել մեր կուսակցությանը, բարձրացնել մեր կուսակցության հեղինակությունը: Բանվորների, դյուլացիների, աշխատավոր ինտելիգենցիայի աչքում, բարձրացնել մեր պետության ուժն ու զորությունը: Իսկ այդ դյուլացինը և: Մեզ հետ լինեն միայն բանվորները, դյուլացիները, աշխատավոր ինտելիգենցիան, իսկ մնացածն ամենը լավ կզնա:

Մյուս ընկերներն ասում են, թե մեր սխալների բացահայտ խոստովանությունը կարող եք հասցնել վոչ թե մեր կադրերի ուսուցման և ամրապնդման, այլ նրանց թուլացման ու քայլայման, թե մենք պետք եք խնայենք ու պահպանենք մեր կադրերը, թե մենք պետք եք խնայենք նրանց ինքնասիրությունն ու հանդսությունը: Դրա համար նրանք առաջարկում են սքովել մեր բնկերների սխալները, թուլացնել քննադատության ուժը, իսկ ել ամենի բավ կլինի, յեթե մենք անցնենք այդ սխալների կողքով: Այդպիսի դրույթը վոչ միայն արմատապես սխալ ե, այլև վերին աստիճանի վտանգավոր, վտանգավոր նախ և առաջ այն կադրերի համար, վարունց ցանկանում են «ինայել» և «պահպանել»: Ինայել ու պահպանել կադրերին նրանց սխալներն սքովելու միջոցով, այդ նշանակում է հաստատապես կորսույան մատնել հենց այդ կադրերին: Մենք հաստատապես կործանած կլինեյինք մեր կոլոնտեսային բոլցեկիյան կադրերին, յեթե չբացահայտեյինք 1930 թվականի սխալները և այդ սխալների վրա չսովորեցնեյինք նրանց: Մենք հաստատապես կործանած կլինեյինք մեր արդյունաբերական բոլշևիկյան կադրերին, յեթե մենք չբացահայտեյինք մեր ընկերների սխալները և այդ սխալների վրա չսովորեցնեյինք մեր արդյունաբերական կադրերին: Ով մտածում է խնայել մեր կադրերի ինքնասիրությունը՝ նրանց սխալներն սքովելու միջոցով, նա կործանում է թե՛ կադրերին, թե՛ կադրերի ինքնասիրությունը, վորովհետեւ նա այդ կադրերի սխալներն սքովելով հեշտացնում է նոր, զուցի ել ավելի լուրջ սխալների կրկնությունը, վորոնք, պետք եք յենթագրել, վոր կհասցնեն կադրերի լիակատար տապալման ի վնաս նրանց «ինքնասիրության» ու «հանդսության»:

6) Լենինը մեզ ուսուցանում եր վոչ միայն սովորեցնել մասաներին, այլ և սալորել մասսաներից:

ի՞նչ և նշանակում այդ:

Այդ նշանակում ե, վոր մենք, ղեկավարներս, չպետք ե ամբարտավանանք և պետք ե հասկանանք, վոր յեթե մենք կենտկոմի անդամներ կամ ժողկոմներ ենք, ապա այդ դեռ չի նշանակում, թե մենք տիրապետում ենք այն բոլոր գիտելիքներին, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի ճիշտ ղեկավարենք: Աստիճանն ինքնին գիտելիքներ և փորձ չի տալիս: Կոչումն—առավել ես:

Այդ նշանակում ե, վոր հենց միայն մեր փորձը, ղեկավարների փիրձը դեռ բավական չի ճիշտ ղեկավարելու համար, վոր, հետեւապես, անհրաժեշտ ե մեր փորձը, ղեկավարների փորձը լրացնել մասսաների փորձով, կուսակցական մասսայի փորձով, բանվոր դասակարգի փորձով, ժողովրդի փորձով:

Այդ նշանակում ե՝ վոչ մի բոլե չթուլացնել, իսկ առավել ևս չխցել մեր կապերը մասսաների հետ:

Այդ նշանակում ե, վերջապես, դդայում կերպով ունկնդրել մասսաների ձայնին, կուսակցության շարքային անդամների ձայնին, այսպես կոչված «փոքր մարդկանց» ձայնին, ժողովրդի ձայնին:

Ի՞նչ ե նշանակում ճիշտ ղեկավարել:

Այդ բնավ չի նշանակում նստել գրասենյակում և դիրեկտիվներ դրել:

Ճիշտ ղեկավարել—այդ նշանակում ե.

առաջին՝ գտնել հարցի ճիշտ լուծումը: Իսկ ճիշտ լուծում գտնելն անհնարին ե առանց մասսաների փորձի հաշվառման, մասսաների, վորոնք իրենց սեփական մեջքի վրա յեն փորձում մեր ղեկավարության արդյունքները.

յերկրորդ՝ կազմակերպել ճիշտ վորոշման կենսադործումը, վորը, սակայն, չի կարելի կատարել առանց մասսաների կողմից ուղղակի ոգնություն ստանալու.

յերրորդ՝ կազմակերպել այդ վորոշման կատարման ստուդումը, վոր դարձյալ հանրավոր չե կատարել առանց մասսաների ուղղակի ոգնության:

Մենք, ղեկավարներս, իրերը, ղեկավարը, մարդկանց տեսնում ենք միայն մեկ կողմից, յես կասեիի—կերեկից, մեր տեսողության դաշտը, հետեւաբար, ավելի կամ պակաս չափով սահմանափակված ե: Մասսաները, ընդհակառակը, իրերը, ղեկավարը, մարդկանց տեսնում են մյուս կողմից, յես կասեիի—ներքեկից, նրանց տեսողության դաշտը, հետեւաբար, նույնպես վորոշ չափով սահ-

մանափակված ե: Հարցի ճիշտ լուծում ստանալու համար պետք ե միացնել այդ յերկու փորձերը: Միայն այդ դեպքում ղեկավարությունը ճիշտ կլինի:

Ահա թե ինչ ե նշանակում վոչ միայն սովորեցնել մասսաներին, այլև սովորել մասսաներից:

Յերկու որինակ, վորոնք ցուցադրում են լենինի այդ դրույթի ճիշտ լինելը:

Այդ սրանից մի քանի տարի առաջ եր: Մենք, կենտկոմի անդամներս, քննարկում եյինք Դոնբասում դրությունը բարելավելու հարցը: Ձեռնարկումների այն նախագիծը, վորը ներկայացրել եր Մանր Արդյունաբերության ժողկոմատը, բացահայտուեն անբավարար եր: Յերեք անգամ նախագիծը վերադարձրինք Մանր Արդյունաբերության ժողկոմատից: Յերեք անգամ Մանր Արդյունաբերության ժողկոմատից ստացանք տարբեր նախագծեր: Յեզ, այնուամենայնիվ, չեր կարելի դրանք բավարար համարել: Վերջապես մենք վորոշեցինք Դոնբասից հրավիրել մի քանի բանվորների և շարքային տնտեսվարների ու պրոֆմիութենական աշխատողների: Յերեք որ մենք զրուցում եյինք այդ ընկերների հետ: Յեզ մենք բոլորս, կենտկոմի անդամներս, պետք ե խոստովանեյինք, վոր միայն նրանք, այդ շարքային աշխատողները, այդ «փոքր մարդիկ» կարողացան հուշել մեզ ճիշտ վորոշում: Դաւք պետք ե վոր հիշեք կենտկոմի և ժողկոմխորհի հայտնի վորոշումը Դոնբասում ածխի հանույթն ուժեղացնելու միջոցառումների մասին: Ահա, կենտկոմի և ժողկոմխորհի հենց այդ վորոշումը, վորը մեր բոլոր ընկերների կողմից ընդունված ե իրեւ ճիշտ և նույնիսկ հոչակալվոր վորոշում, մեզ հուշել են ներքեկից յեկած հասարակ մարդիկ:

Մի այլ որինակ: Յես նկատի ունեմ ընկեր նիկոլայենկոյի որինակը: Ո՞վ ե նիկոլայենկոն: Նիկոլայենկոն—կուսակցության շարքային անդամ ե: Նա սովորական «փոքրիկ մարդ ե»: Մի ամբողջ տարի նա ազդանշաններ եր տալիս կիւկի կուսակցական կազմակերպության մեջ դրությունն անբարենպաստ լինելու մասին, մերկացնում եր ընտանեկանությունը, քաղքենիական—մեշշանական մոտեցումը դեպի աշխատողները, ինքնաքննադատության մնշումը, տրոցկիստական վնասարարների դերուժությունը: Նրանից խուսափում եյին, ինչպես աներես ճանճից: Վերջապես նրանից ազատվելու համար վերցրին և նրան վտարեցին կուսակ-

ցությունից։ Կո՛չ կիւի կազմակերպությունը, վո՞չ Ուկր. Կ(Բ)կ կենտկոմը չոգնեցին նրան ճշմարտության հասնելու։ Միայն կուսակցության կենտրոնական կոմիտեի միջամտությունն ողնեց քաջ անելու այդ խճճված հանգույցը։ Իսկ ի՞նչ պարզվեց դործը քննելուց հետո։ Պարզվեց, վոր Նիկոլայինկոն իրավացի յէ յեղել, իսկ կիւի կազմակերպությունը յեղել ե անիրավացի։ Վո՞չ ավելի, վո՞չ պակաս։ Իսկ ո՞վ ե Նիկոլայինկոն։ Նա, իհարկե, կենտկոմի անդամ չե, ժողկոմ չե, նա կիւի մարզային կազմակերպության քարտուղարը չե, նա նույնիսկ վորեւ բջջի քարտուղար ել չե, նա կուսակցության սոսկ հասարակ շարքային անդամ ե։

Ինչպես տեսնում եք, հասարակ մարդկել յերեմն շատ ավելի մատիկ են լինում ճշմարտությանը, քան թե վորոշ բարձրադաս հիմնարկներ։

Կարելի յեր դարձյալ տասնյակ ու հարյուրավոր այսպիսի որինակներ բերել։

Այսպիսով, դուքս ե գալիս, վոր մեր դործը ղեկավարելու համար հենց միայն մեր փորձը, ղեկավարների փորձը դեռ շատ հեռու յէ բավարար լինելուց։ Ճիշտ ղեկավարելու համար անհամեցած ե ղեկավարների փորձը լրացնել կուսակցական մասսայի փորձով, բանվոր գասակարդի փորձով, աշխատավորների փորձով։

Իսկ յե՞ր ե այդ հնարավոր։

Այդ հնարավոր ե միայն այն դեպքում, յեթե ղեկավարները մասսաների հետ կապված են ամենասերտ կերպով, յեթե նրանք կապված են կուսակցական մասսաների հետ, բանվոր գասակարդի հետ, դյուլացիության հետ, աշխատավոր ինտելիգենցիայի հետ։

Կապը մասսաների հետ, այդ կապի ամրապնդումը, մասսաների ձայնին ունկնդրելու պատրաստակամությունը—ահա թե ինչի մեջ ե բոլշևիկյան ղեկավարության ուժն ու անպարտելիությունը։

Կարելի յե վորպես կանոն ընդունել, վոր քանի բոլշևիկները կապ են պահպանում ժողովրդի լայն մասսաների հետ, նրանք անպարտելի կլինեն։ Յեվ, ընդհակառակը, բավական ե միայն, վոր բոլշևիկները կտրվեն մասսաներից և կորցնեն նրանց հետ ունեցած կապը, բավական ե միայն, վոր նրանք ծածկվեն բյուրոկրատական ժանդով, վորպեսզի նրանք դրկվեն ամեն ուժից և դատարկ բանի վերածվեն։

Հին հույներն իրենց առասպելաբանության սիստեմում, ունեյին մի հոչակավոր հերոս—Անթեյը, վորն ինչպես առում ե առասպելաբանությունը, յեղել ե ծովերի աստվածուհի Գեյայի վորդին։ Նա իրեն հատկապես կապված եր զգում իր մոր հետ, վորը ծնել եր նրան, կերակրել ե գաստիարակել։ Զկար այնպիսի հերոս, վորին նա, այդ Անթեյը չաղթեր։ Նա համարլում եր անպարտելի հերոս։ Ինչո՞ւն եր նրա ուժը։ Այդ ուժն այն բանի մեջ եր, վոր ամեն անդամ, յեր հակառակորդի գեմ մզած պայքարում նա նեղն եր ընկնում, նա շփում եր դետնին, իր մորը, վորը ծնել ու կերակրել եր նրան, և նոր ուժ եր ստանում։ Բայց նա, այնուամենայնիվ, ուներ իր թույլ տեղը—այդ վորեւ կերպ հողդից կտրվելու վտանգն եր։ Թշնամիները հաշվի երին առնում նրա այդ թուլությունը և դարանակալում երին նրան։ Յեվ ահա, գտնվեց մի թշնամի, վորն ոգտագործեց նրան այդ թուլությունը և հաղթեց նրան։ Դա Հերկուլեսն եր։ Բայց Հերկուլեսն ի՞նչպես հաղթեց նրան։ Նա Անթեյին կտրեց գետնից, բարձրացրեց ողի մեջ, խեց նրանից հողին շփվելու հնարավորությունը և այդպիսով ողի մեջ խեղդեց նրան։

Յես կարծում եմ, վոր բոլշևիկները մեզ հիշեցնում են հունական առասպելաբանության հերոս Անթեյին։ Նրանք նույնպես, ինչպես և Անթեյը, ուժեղ են նրանով, վոր կապ են պահպանում իրենց մոր հետ, մասսաների հետ, վորոնք ծնել, սնել և դաստիարակել են նրանց։ Յեվ քանի նրանք կապ են պահպանում իրենց մոր հետ, ժողովրդի հետ, նրանք բոլորդի հետ, ունենալու համար։

Սրա մեջ ե բոլշևիկյան ղեկավարության անպարտելիության բանալին։

7) Վերջապես, գարձյալ մեկ հարց։ Յես նկատի ունեմ մեր վորոշ կուսակցական ընկերների ձևական ու անհողի-բյուրոկրատական վերաբերմունքը գեպի կուսակցության առանձին անդամների բախոր, գեպի կուսակցության անդամներին կուսակցությունից վտարելու հարցը, կամ թե գեպի վտարվածներին կուսակցության անդամի իրավունքների մեջ վերականգնելու հարցը։ Բանն այն է, վոր մեր վորոշ կուսակցական ղեկավարներ տառապում են մարդկանց նկատմամբ, կուսակցության անդամների նկատմամբ, աշխատողների նկատմամբ ուշադրության բացակայությամբ։ Այդ-

շին, նրանք չեն ուսումնասիրում կուսակցության անդամներին. չդիտեն ինչով են ապրում նրանք և ինչպես են նրանք աճում, առհասարակ չեն ճանաչում աշխատողներին: Ուստի նրանք անհատական մոտեցում չունեն դեպի կուսակցության անդամները, դեպի կուսակցության աշխատողները: Յեվ հենց այն պատճառով, վոր նրանք անհատական մոտեցում չունեն կուսակցության անդամների և կուսակցական աշխատողների գնահատման ժամանակ, նրանք սովորաբար դործում են՝ ինչպես պատահի—կամ անհիմն կերպով առանց վորեւ չափի դոլարանում են, կամ թե նույնպես անհիմն կերպով և առանց վորեւ չափի խարազանում են նրանց, վտարում են կուսակցությունից հազարներով ու տասնյակ հազարներով: Այդպիսի ղեկավարներն առհասարակ աշխատում են մտածել տասնյակ հազարներով, առանց հոգ տանելու «միալորների» մասին, կուսակցության առանձին անդամների մասին, նրանց բախտի մասին: Հազարավոր ու տասնյակ հազարավոր մարդկանց կուսակցությունից վտարելը նրանք համարում են դատարկ բան, իրենց միիթարելով այն բանով, թե մեր կուսակցությունն ունի յերկու միջին անդամ և տասնյակ հազարավոր վտարվածները չեն կարող վորեւ բան փոխել կուսակցության դրության մեջ: Բայց այդպես կարող են մոտենալ կուսակցության անդամներին միայն ըստ եյության խորապես հակակուսակցական մարդիկ:

Մարդկանց նկատմամբ, կուսակցության անդամների և կուսակցական աշխատողների նկատմամբ այդպիսի անհոգի վերաբերմունքի հետևանքով կուսակցության մեկ մասի մեջ արհեստականորեն ստեղծվում է դժգոհություն ու գաղաղում, իսկ մրոցկատական յերկերեսանիները ճարպիկ կերպով իրենց ճանկն են գցում այդպիսի գաղաղած ընկերների և նրանց իրենց հետեւց հմտորեն քաշ են տալիս տրոցկիստական վնասարարության ճահիճը:

Ինքնըստինքյան տրոցկիստները յերբեք մեծ ուժ չեն ներկայացրել մեր կուսակցության մեջ: Հիշեցեք մեր կուսակցության մեջ տեղի ունեցած վերջին դիմուսիան 1927 թվականին: Այդ իսկական կուսակցական ռեֆերենտում եր: Կուսակցության 854 հազար անդամից այն ժամանակ քվեարկեց կուսակցության 730 հազար անդամ: Դրանցից բոլեմիկների ոդտին, կուսակցության հազար անդամ: Դրանցից բոլեմիկների ոդտին, կուսակցության հենտորնական կոմիտեի ոդտին՝ ընդդեմ տրոցկիստների՝ քվեարկեցին կուսակցության 724 հազար անդամ. տրոցկիստների ոդ-

տին՝ կուսակցության 4 հազար անդամ, այսինքն մոտավորապես կես տոկոսը և ձեռնպահ մնացին կուսակցության 2600 անդամ: Քվեարկությանը չմասնակցեցին կուսակցության 123 հազար անդամ: Նրանք չմասնակցեցին կամ այն պատճառով, վոր ըրջագայության մեջ եյին գտնվում, կամ թե այն պատճառով, վոր դանվում եյին հերթափոխերում: Յեթե տրոցկիստների ոդտին քվեարկած 4 հազար հոգու վրա ավելացնենք բոլոր ձեռնպահ մնացածներին, —և յեթե այդ գումարին ավելացնենք վոր թե քվեարկությանը չմասնակցածների կես տոկոսը, ինչպես այդ պետք եր անել ըստ կանոնի, այլ չմասնակցածների հինգ տոկոսը, այսինքն՝ կուսակցության մոտ 6 հազար անդամի, ապա կըստացվի կուսակցության մոտ 12 հազար անդամ, վորոնք այս կամ այն կերպ համակրում եյին տրոցկիզմին: Ահա ձեզ՝ պարոնայք տրոցկիստների ամբողջ ուժը: Դրան ամելացրեք այն հանդաման տրոցկիստների ամբողջ ուժը: Դայց այդպիսի ամսանուղներից շատերը հիասթափվեցին քը, վոր այդ թվին պատկանողներից շատերը հիասթափվեցին տրոցկիզմից ու հեռացան նրանից, և դուք պատկերացում կստանաք տրոցկիստական ուժերի չնչինեւթյան մասին: Յեվ յեթե, չնայած դրան, տրոցկիստական վնասարարները, այնուամենայնիվ, վորոշ ուեղերվներ ունեն մեր կուսակցության մոտերքում, ապա այդ այն պատճառով, վոր կուսակցությունից վտարելու և վտարվածների վերականգնման հարցում մեր վորոշ ընկերների սիսալ քաղաքականությունը, մեր վորոշ ընկերների անհոգի վերաբերմունքը դեպի կուսակցության առանձին անդամների ու առանձին աշխատողների բախտը, արհեստականորեն աճեցնում են դժգոհների ու գաղաղածների քանակությունը և այդպիսով տրոցկիստների համար ստեղծում են այդ ուեղերվները:

Վտարում են մեծ մասամբ այսպես կոչված պասսիվության համար: Ի՞նչ բան և պասսիվությունը: Բանից դուրս եւ գալիս, գտնում են, վոր յեթե կուսակցության անդամը չի յուրացրել կուսակցության հրադիրը, ապա նա պասսիվ եւ յենթակա յետիկական: Բայց չե՞ վոր այդ սիսալ եւ, ընկերներ: Զի կարելի վտարման: Բայց չե՞ վոր այդ սիսալ եւ, ընկերներ: Զի կարելի վտարման: Կուսակցության ծրագիրը յուրացնելու համար նոնադրությունը: Կուսակցության ծրագիրը յուրացնելու համար պետք ե իսկական մարքարիտ լինել, ստուգված ու տեսականորեն պատճենագիր ամսաթափառական մարքսիստ: Յես չգիտեմ՝ մեզ մոտ շա՞տ կդանվեն պատճենագիր ամսաթափառական մարքսիստ անդամներ, վորոնք արդյոք կուսակցության այնպիսի անդամներ,

յուրացրել են մեր ծրագիրը, դարձել են իսկական մարքսիստներ, տեսականորեն պատրաստված և ստուգված։ Յեթե առաջ դնալու լինենք այդ ուղիով, ապա մենք ստիպված կլինելինք կուսակցության մեջ թողնել միայն ինտելլիգենտներին և առհասարակ դիտական մարդկանց։ Ում ե պետք այդպիսի կուսակցությունը։ Մենք ունենք կուսակցության անդամության մասին ստուգված և բոլոր փորձությունների գիմացած լենինյան Փորմուլա։ Այդ Փորմուլայի համաձայն՝ կուսակցության անդամ համարվում է նա, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, մուծում է անդամավճար և աշխատում է նրա կաղմակերպություններից մեկում։ Ուշադրություն դարձրեք լենինյան Փորմուլայի մեջ խոսվում ե վոչ թե ծրագրի յուրացման մասին, այլ ծրագիրն ընդունելու մասին։ Մրանք յերկու միանդամայն տարրեր բաներ են։ Ապացուցելու կարիք անդամ չկա, վոր այստեղ իրավացի յե լենինը և վոչ թե մեր այն կուսակցական ընկերները, փորոնք զատարկ տեղը շաղակատում են ծրագրի յուրացման մասին։ Յեկ այդ հասկանալի յե։ Յեթե կուսակցությունը յելներ այն բանից, վոր կուսակցության անդամ կարող են լինել միայն այնպիսի ընկերներ, փորոնք արդեն յուրացրել են ծրագիրը և դարձել են տեսականորեն պատրաստված մարքսիստներ, ապա նա կուսակցության մեջ չեր ստեղծի հազարավոր կուսակցական խմբակներ, հարյուրավոր կուսակցական գպրոցներ, վորտեղ կուսակցության անդամներին մարքսիզմ են սովորեցնում և նրանց ոգնում են յուրացնելու մեր ծրագիրը։ Միանդամայն պարզ ե, վոր յեթե կուսակցությունն այդպիսի գպրոցներ ու խմբակներ ե կաղմակերպում կուսակցության անդամների մեջ, ապա այդ այն պատճառով ե, վոր նա դիտե, վոր կուսակցության անդամները գեռ չեն կարողացել յուրացնել կուսակցական ծրագիրը, գեռ չեն կարողացել տեսականորեն պատրաստված մարքսիստներ դառնալ։

Հետեւաբար կուսակցության անդամության և կուսակցությունից վտարելու հարցում մեր քաղաքականությունն ուղղելու համար անհրաժեշտ ե վերջ գնել պասոիվության հարցի ներկային քյալագյողական մեկնարանությանը։

Բայց մենք մի այլ մեղք ել ունենք այդ բնագավառում։ Բանն այն ե, վոր մեր ընկերները չեն ընդունում յերկու ծայրահեղությունների միջինը։ Բավական ե միայն վոր բանվորը, կուսակ-

ցության անդամը մի թեթև զանցանք կատարի, մեկ-յերկու անդամ ուշանա կուսակցական ժողովին, վորեւ պատճառով չմուծի անդամավճարը, վորպեսի նրան մի ակնթարթում դուրս վոնդեն կուսակցությունից։ Զեն հետաքրքրվում նրա զանցանքի աստիճանով, ժողովին չներկայանալու պատճառով, անդամավճարը չմուծելու պատճառով։ Բյուրոկրատիզմն այդ հարցերի մեջ ուղղակի չունենած է։ Դժվար չե հասկանալ, վոր հենց այդպիսի անհոգի քաղաքականության հետեւանքով եր, վոր կուսակցությունից դուրս չալսովեցին հիանալի կաղըային բանվորներ, սքանչելի ստախանովականներ։ Իսկ միթե՞ չեր կարելի նախքան կուսակցությունից վտարելը նրանց նախազգուշացում անել, յեթե այդ չի ոգնում—ի ցույց դնել, կամ թե նկատողություն անել, և յեթե այդ ել չի ոգնում—ժամկետ սահմանել ուղղվելու համար կամ, ծայրահեղ զեպքում, փոխադրել թեկնածու, բայց վոչ թե մեկ հարվածով վտարել կուսակցությունից։ Իհարկե, կարելի յեր։ Բայց զըա համար պահանջվում ե ուշագիր վերաբերմունք մարդկանց նկատմամբ, կուսակցության անդամների նկատմամբ, կուսակցության անդամների բախտի նկատմամբ։ Բայց հենց այդ ե, վոր պակասում ե մեր վորոշ ընկերներին։

Ժամանակն ե, ընկերներ, վաղուց ժամանակն ե վերջ դնելու այդ խայտառակությանը (ծափահարություններ)։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԵՎ ՏՐՈՑԿԻՄԱԿԱՆ ՈՒ ԱՅԼ ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻՆԵՐԻՆ ՀԻԿ- ՎԻԴԱՑԻՄՅԵՒ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱ- ՍԻՆ (Զեկուցում Համկ(թ)Կ Կենտկոմի պլենումում)	5.
I. Քաղաքական անհոգուրյուն	6.
II. Կապիտալիստական շրջապատռումը	11.
III. Արդի տրոցկիզմը	14.
IV. Տետևական հաջողուրյունների սովերոտ կող- մերը	21.
V. Մեր խնդիրները	25.
ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ	39.

Թարգմ. Խմբագիր Մակինց Ն2.

Թարգմ. Տ.-Մինասյան Յե.

Տեխն. Խմբ. Խաչատրյան Ա.

Կոնտրոլ սրբագրիչ Տ.-Մինասյան Յե.

Սրբագրիչ Տ.-Մինասյան Ա.

Քլավիսի լիազոր հ-4882, հրատարակության № 444

Պատվիր Հ 72

Տիրաժ 10.000, ինդեքս ԱՀ
PK

Հանձնված է արտադրության 20/IV 1937 թ.

Ստորագրված է տպագրության 28/IV 1937 թ.

Գինը 50 կ.

Հայկուսէրտի տպարտն, Յերևան, Ալահիլեղյան Ն 7 է



NL0184054

«Ազգային գրադարան»

